

613.88
L5 - 58



1910 № 716.

ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՓԱՇԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

20 JUL 2010

ՀԱՆՈՒԹՅԱ
ԽՈՍՏՈՒԹՅԱ
ԱԿԱДЕՄԻԿԱԿԱՆ
Ակադեմիա Խոստ
ՀԽՍՀ

ՏՂԱՄԱՐԴԻ

ՄԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.

Ա. Հրատարակութիւն.

ԿԱԶՄԵՑ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ ՖԵԼԻՃԵՐ-ՄԱՍԱՎԱԺԻԱՏ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԸՑԵԱՆ
(ԱՐՏԷՄ)

3.88

-58

Թ Հ Ձ Լ Ի Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ ՊՈՂԻՆ 7

1910



6/3.88

6-58

25 JUNE 2010
БІЛОСНЯВО
РДСЧАДИ ԴՐԱԴԱՐԱՆ ԶԱՓԱՀԱԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БІЛОСНЯВО

БІЛОСНЯВО
ІНСТИТУТ
ДІЛІЖАНДЕДІ
АКАДЕМІКІН НАУК
СССР

ՏՂԱՄԱՐԴԻ

ՄԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.

Ա. Հ Ր Մ Մ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն.



Կ Ա Զ Մ Ե Ց
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ ՖԵԼԴԵՐ-ՄԱՍՍԱԺԻԱՏ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԸՑԵԱՆ
(ԱՐՏԵՄ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԷԼԵԳԱՆՏԱԿԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻ. 7.
1910

ՕՐԾ ԱՐ

2898

08 APR 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



61308-67

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ գրականութիւնը աղքատ է բժշկական առողջապահական գրուածքներով: Մասնաւորապէս մեծ կարիք և պահանջ կայ պարզ և հանրամատչելի դրքերի սեռական կեանքի մասին: Առանց կեղծ համեստութեան և կեղծիքի ամեն մարդ կը խոստովանէ, որ ներկայումս ամբողջ մարդկութիւնը, առաւելապէս երկսեռ երիտասարդութիւնը, խրվել է սեռական անյագուրդ հաճոյքների ծովում, աշխատելով կեանքի ամբողջ նպատակը և բաւականութիւնը հիմնել սեռական կեանքի վրայ: Մենք այս գրքով կը խօսենք անկեղծ, առանց չափազանցութիւնների, առաջ բերելով մասնագէտների կարծիքները: Միջոց և հնարաւորութիւն չունենալով գիրքս հրատարակել միծածաւալ միահատորով, որոշեցի երկրորդ մասը յետոյ տպել, որի մէջ կը լինի բացառապէս տղոմարդի սեռական անկարողութիւնը, թուլութիւնը և բժշկութիւնը

Իւրաքանչիւր մի անաշառ և լուրջ կարծիք գըրքիս մասին բժիշկների և ձեւմնաս անձանց կողմից կը լսեմ մեծ շնորհակալութեամբ և առանց վիրաւորվելու, որոնցով կօգտվեմ յետազայ հրատարակութիւններիս համար:

ՍԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Բնութեան արարածները՝ չնչաւոր թէ ան-
շունչ, գաղտնի զօրութեամբ ձգտում են իրանց
ցեղը-տեսակը շարունակել սերման երկոյթի մի-
ջոցով։ Սերումն իր բոլոր ձևերով և եղանակնե-
րով կազմում է սեռական կեանք։ Սերումը տար-
բեր է բոյսերի և կենդանիների մէջ։ Ծա-
ղիկները սերում և սերվում են, կամ ա-
ւելի պարզն ասած, սեռական յառաբերութիւն
են ունենում իրանց արտադրած փոշին նման
էզ ծաղիկների վրայ ցանելով։ Իսկ չնչաւոր ա-
րարածներին բնութիւնը տվել է սերման համար
որոշ գործարաններ աւելի և զարգացած, քան
բոյսերինը։ Սեռական գործարանները երկու տե-
սակ են՝ արական և իգական։ Թէ երկու սե-
ռերի՝ այսինքն արուների և էպերի՝ նպատակը
մի է—սեռական ակտի միջոցով արտադրել, ծը-
ննդաբերել իրանց նման մի երրորդ էակ, սա-
կայն սեռական գործարանների անատօմիական
ու ֆիզիոլոգիական ֆունկցիաները տարբեր են

սեռման մասին։ Եթէ ծանրակշիռ, լուրջ բացա-
տրութիւններով չըսթափեցրին մոլեգնող մարդ-
կութեանը, նա վերջի վերջոյ իր քաղաքակր-
թութեամբ կը թաղվի կրքերի կեղտոտ ճահճում
իր ձեռքով փորած գերեզմանի մէջ։



II

ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Ամորձիքներ (ձուաներ), սերֆնարեր խողո-
վակներ, սերֆնապարկեր, շագանակածև գեղձ,
առնանդամ։

Ամորձիքները (testiculi) երկու բաւական խո-
շոր ձուածև և տափակ գեղձեր են։ Նրանք պար-
փակված են մի ընդհանուր մսապարկում և առ-
նանդամի տակից երկու ոտքերի արանքում
կախված են։ Աջ ամորձիքը մի քիչ փոքր է ձա-
խից և սրանից բարձրն է գտնվում։

Ամորձիքը մի փափուկ մարմին է, որ բաղ-
կացած է բազմաթիւ կոնսածև մանր մասնիկնե-
րից։ Խւրաքանչիւր մասնիկ ունի իր արտահանիչ
խողովակը։ մանրագոյն խողովակները միախառ-
նըվելով աստիճանաբար կազմում են աւելի խո-
շոր խողովակներ, որոնք իրանց հերթին միա-
նալով կազմում են այսպէս կոչված մակամոր-
ծիքը։ Մակամորձիքի վերին հաստ մասը կոչ-
վում է մակամորձիքի զլուխ, իսկ յետերի աւե-
լի բարակ մասը—պլոչ, որից և սկիզբն է առ-
նում սերմը արտահանող մեծ խողովակը։ Վեր-
ջինս դուրս գալով ամորձիքապարկից բարձրա-
նում է դէպի ածուկը (պախ) և միախառնվելով

նեարդերի, արեան և աւշային անօթների հետ,
կազմում է այսպէս կոչված սերմնապարանը
(СЕМЯННОЙ канатикъ): Ապա բաժանվելով ջղե-
րից ու անօթներից գնում է դէպի միզապարկի
յետին և ստորին կողմը և այստեղ հանդիպելով
իր զոյգի հետ մտնում է սերմնապարկի մէջ:

Սերմնապարկերը (vesiculae seminalis) պար-
կած մարմիններ են, որոնք տնկում են մի-
զապարկի և ուղիղ աղիքի միջնավայրում, մե-
զանցքի աջ ու ձախ կողմերում: Սերմնացեր
խողովակը իր բերած սերմը ամբարում է սերմ-
նապարկի մէջ: Սերմնապարկերից բացվում են
սերմնացայտ խողովակներ, որոնք սերմը ցայ-
տեցնում են դէպի միզանցքը:

Շագանակածնեգեղձը (glandula prostata) թաղ-
ված է մաի շերտի մէջ և գտնվում է միզանցքի սկզ-
բում, օղածելնդգրկելով միզապարկի պարանոցը:
Նա իր ձևով շատ նման է շագանակի, ուստի և
կոչվում է շագանակած գեղձ: Նա բաղկացած
է 30—50 ողկուզածե մասերից, որոնցից բաց-
վում են արտահանիչ խողովակներ միզանցքում՝
սերմնախողովակներին կից: Այս գեղձն էլ ար-
տադրում է սպիտականման հեղուկ, որը խոռ-
նվում է սերմի հետ: Շագանակածն գեղձին կից
գտնվում են երկու փոքրիկ գեղձիկներ—կուպէ-
րեան գեղձիկները, որոնք նոյնպէս արտադրում
են հեղուկ:

Առնանդամը կամ վարոցը (penis) կազմում
է միզասեռական անցքի արտաքին մասը: Նա
երկարածկ, լլորակ և մսապատ խողովակ է, որի
միջով անցնում են մէզը և սերմը: Բնութիւնը
հիանալի ճարպիկութեամբ համերաշխօրէն միաց-
րել է առնանդամի մէջ երկու տարբեր ֆունկ-
ցիաներ: Առնանդամի երկարութիւնը հանգիստ
միջոցին լինում է 3—5 դիւյմ. հաստութիւնը
10—20 դիմ: Իսկ կանգնած ըռպէին նա դառ-
նում է $1\frac{1}{2}$, կրկնակի և յաճախ $2\frac{1}{2}$ անգամ
բնականից մեծ: (Աւելի երկար կամ սաստիկ
փոքր առնանդամը մարմնի արատ է): Առնան-
դամը արտաքին կողմից պարուրված է վերնա-
մաշկով, որի տակ գտնվում է մկանային խաւը,
ապա հետևում է նեարդային շերտը. իսկ ամ-
բողջ միջին մասը բաղկացած է բազմաթիւ խո-
ռոչաւոր մասերից, որոնց պատերը բաւական
տառածգական են: Խոռոչաւոր մարմինների մէջ
գտնւում են սաստիկ մեծ քանակութեամբ ա-
րեան մանր անօթներ, որոնք ընդունակ են
վայրկենաբար լայնանալ ու լցվել արեան մեծ
քանակութեամբ: Անա արեան այս լցումն և ա-
ռաջացնում է առնանդամի կանգնումն: Որքան
շատ լայնանան արեան անօթները և լցվեն մա-
կընթաց արիւնով, այնքան աւելի ուժեղ կը լի-
նի առնանդամի կանգնումը—էրէկցիան, և ընդ-
հակառակն: Առնանդամի սկզբի մասը կոչվում

է արմատ, որը ծածկված է լինում մազերով.
միջին մասը—բուն, իսկ վերջաւորութիւնը՝
գլուխ: Բունը և գլուխը զուրկ են լինում մա-
զերից: Գլուխը բաղկացած չէ խոռոչաւոր մար-
միններից, ինչպէս բունը, այլ սպնդաձկ մասե-
րից, որոնք նոյնպէս լայնանում և լցվում են ա-
րիւնով, սակայն աւելի պակաս աստիճանի, քան
խոռոչաւոր մարմինները: Փորի կաշին իջնելով
ծածկում է առնանդամը, և համնելով նրա գըլ-
խին, չէ ձուլվում, այլ շարժուն կերպով բացում
և ծածկում է գլուխը. այս մասը կոչվում է
թլպատ (praeruptum): Թլպատը առնանդամի ստա-
րին մասում ձուլվում է գլխի հետ և կազմում
է թլպատակապ (frenulum):



ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՐՄԸ

Ընդհանուր սեռական գործարանների արտադրած բոլոր նիւթերից կազմված հեղուկը կոչվում է սերմ: Սա բաղկացած է ձուաների արտադրած (իսկական սերմ), սերմնապարկերի, շագանակածեն և կոպէրեան գեղձերի հեղուկների միխառումից: Սերմը թանձր է, սպիտակագորշագոյն, մածուցիկ և ունի իր առանձնայատուկ հոտը: Եթէ սերմը դիտենք խոշորացոյցի տակ, կը տեսնենք, որ այդ հեղուկի մէջ կան բազմաթիւ մանր շարժուն մարմիններ: Մրանք կոչվում են սերմնակենդաններ (սպերմատոզունդ), որոնք և կազմում են սերմի ամենակարևոր մասը: Խրաքանչիւր սերմնակենդան երկարածեն է, ունի տանձածեն գլուխ, պարանոց և երկար պոչ: Սերմնակենդանի երկարութիւնը լինում է 0,05 միլիմէտր: Մի կաթիլ սերմի մէջ լինում են միքանի միլիօն սերմնակենդաններ: Մարդու ձուաների մէջ նրանք սկսում են գոյանալ 14—16 տարեկան հասակում, և շարունակ գոյանում են մինչև 60—70 տարեկան հասակը: Բեղմնաւորման ամենամեծ գործօնը սերմնակենդանն է:

Սեռական յարաբերութեան բովէին տղամարդի սերմը թափվելով կնոջ բունօցի մէջ, սերմնակենդանները սկսում են ներս թափանցել դէպի արգանդ և արագ շարժումներով փնտրտում են կնոջ ձուիկներին։ Բարեյաջող վայրկեանին որևէ սերմնակենդան կարողանում է ծակել կնոջ սերմում գտնվող ձուիկներից մինը և ներս մտնել. ահա այս վայրկեանից էլ սկսվում է կնոջ յղիութիւնը։ Այսուհետեւ միւս սերմնակենդանները աւելորդ են և ոչնչանում են. հետևաբար, բեղմնաւորման համար բաւական է միայն մէկ սերմնակենդան։

Սակայն բոլոր տղամարդկանց սերմը և նըրա մէջ գտնվող սերմնակենդանները անպայման ընդունակ չեն լինում բեղմնաւորելու։ Զանազան վարակիչ ու ծանր հիւանդութեամբ տառապող մարդկանց սերմնակենդանները լինում են նուազ քանակութեամբ և դանդաղաշարժ։ Ամբողջ կեանքը պունկութեամբ անցկացրած և հոգեպէս ու ֆիզիքապէս հիւծված տղամարդու սերմը նոյնպէս անպէտք է բեղմնաւորման համար, որովհետև նրա վատ սերմի թոյլ սերմնակենդաններից առաջացած բեղմնաւորութեան պտուղը կամ դեռ լոյս աշխարհ չեկած վիժվում է և կամ թէ այդպիսի սերմից ճնվում են վտիտ ու հիւանդու էակներ ի գժբաղդութիւն թէ ծընողների և թէ մանաւանդ ամբողջ մարդկու-

թեան։ Մի խօսքով բեղմնաւորութեան ամենամեծ պայմանն է, որ սերմը լինի առողջ, նօրմալ և նրա սերմնակենդանները առատ, առողջ, աշխոյժ և շարժուն։

Բացի սերմնակենդաններից սերմի մէջ գըտնվում է մի տեսակ հիւթ, որ վերին աստիճան աննդարար և առողջարար ներգործութիւն ունի ամբողջ օրգանիզմի վրայ. այս հիւթը սերմից ըիմիապէս զատած և միայնացրած կոչվում է սպերմին։

Սերմը շարունակ, սակայն շատ դանդաղ կերպով, պատրաստվում է ամբողջիքների մէջ մտնող արիւնից։ Օրգանիզմի մէջ երբէք աւելուրդ սերմ չէ մնում. նրա մի մասը ծծվելով և շրջան առնելով ամբողջ մարմնի մէջ, ինչպէս յիշեցինք, բարերար ներգործութիւն է անում բոլոր օրգանների վրայ. թերևս նա առատ սընունդ է մատակարարում ջղային համակարգութեանը և կազդուրում նրան. իսկ մնացեալ սերմի ամբարման դէպքում, երբ անձը երկար ժամանակ ժուժկալ է պահում իրան, բնութեան կարգադրութեամբ 10-20 օրը մի անգամ սերմը դուրս է հոսում սովորաբար քնած ժամանակ զանազան տրփական երազների ազդեցութեան ներքոյ. այս երկոյթը կոչվում է երազականը, որի մասին կը խօսենք աւելի մանրամասնօրէն պատշաճեալ գլխում։ Պէտք է ասել, որ ամբու-

ձիքները ընդունակ են արագ կերպով էլ սերմ պատրաստել, երբ անհատը բռնադատում է նըրանց. օրինակ, պատահում է, որ մարդ միքանի ժամում 5—10 անգամ մերձեցումն է ունենում և կամ օնանականութիւն անում, և ամեն անգամ էլ սերմ է հոսում, թէպէտ իհարկէ հետզետէ նուազ քանակութեամբ։ Մակայն սեռական այսպիսի անչափաւորութիւնը սաստիկ վընասակար է կազմուածքի համար. նրա հետեանքը լինում է վաղաժամ ծերութիւն, 30—40 տարեկան հասակում սեռական կարողութեան թուլացումն և յաճախ լիովին անկարողութիւն։ Զուաները անընդհատ ուժգին գործելուց անդամալուծվում են, ուժասպառ լինում և միանգամայն կանգ են առնում սերմ արտադրելուց։ Անհրաժեշտ է աշքի առաջ ունենալ, որ մի կաթիլ սերմ պատրաստելու համար գործ է դրվում, այսինքն սպառվում է, միքանի կաթիլ արիւն. հետեարար բնական պահանջից ու սահմանված օրէնքից գուրս անխնայօրէն սերմի առատ վատնումը սպառում է օրգանիզմի արիւնը և առաջացնում սակաւարիւնութիւն։ Իսկ թէ ինչ է սակաւարիւնութիւնը և թէ նրանից որքան ծանը հիւանդութիւններ են առաջանում, կարծում ենք, որ չնչին բացառութեամբ ամենքն էլ գիտեն։ Մարմի ստացած առօրեայ սնունդը չէ բաւականանում շարունակ վատնվող սերմի համար

սպառվող արեան նուազացումը լրացնելու և բոլոր գործարաններին արեան անհրաժեշտ քանակութիւնը մատակարարելու։ Այս բոլորի հետեւանք լինում է մարմնի արագ ու սաստիկ նիհարումն, քայլքայումն։ Ուրեմն կարելի է ասել, որ սերմը կեանքի բալզամն է և արիւնից աւելի թանգ հեղուկ։ Բացի այդ, եթէ յիշենք, որ սերմը այն թանգագին հիւթն է, որի սէջ գանվում է ապագայ մարդու կեանքը սաղմնային դրութեամբ, պարզ կը լինի, թէ ինչպիսի մեծ յանցանք է գործում անչափաւոր մարդը անընդհատ և անտեղի փշացնելով այդ անփոխարինելի հեղուկը. նա ոչ միայն մեղանչում է բնութեան օրէնքի դէմ, այլև անարժան մեղապարտ է գանում ամբողջ մարդկութեան առաջ։ Բընութիւնն էլ իր հերթին անպատիժ չէ թողնում այդպիսիներին,

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՐՈՆԱԿԱՐԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՅԱՆԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՎՈՐ
ԱԿADEMİCİ
SSSR



IV

ՍԵՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՄԵՐՁԱՀՈՐՈՒԹԻՒՆ

Երկու սեռերի փոխադարձ միաւորութիւնը սեռական գործարանների միջոցով կոչվում է սեռական յարաբերութիւն կամ մերձեցումն, որի բնական նպատակն է ցեղի շարունակութիւնը նոր էակներ արտադրելով։ Բնութիւնը իր արարածներին դէպի մերձաւորութեան ակտը դրդելու համար սահմանել է մի վերին աստիճան քաղցը հաճոյք։ Ամբողջ սեռային բնութիւնը զարթեցնող ոյժը կոչվում է կիբք, որը ջղերի միջոցով գրգում է սեռական գործարանները և առաջացնում մերձեցման ցանկութիւն։ Այդ ժամանակ գրգում են առնանդամի նեարդերը, որից յետոյ անդամի բազմաթիւ արեան անօթները լայնանում են, լցում մեծ քանակութեան արիւնով (կանգնումն)։ Նոյն բոպէին գրգում են լինում նաև ամորձիքների, սերմնապարկերի, շագանակածե և կոպէրեան գեղձերի ջղերը, յարաբերութեան վճռական վայրկեանին նրանք միանդամից թափում են իրանց հեղուկները և սրանք միախառնվելով, կազմում են սերմը, որը

առնանդամի մկանների արագ կծկումի շնորհիւ առաջ է շարժվում և բաւական մեծ ուժովնետվում է դէպի կնոջ արգանդը։ Այստեղ մենք աւելորդ ենք համարում նկարագրել սեռական մերձեցման գործողութիւնը, քանի որ ներկայումս, դժբախտաբար, առանց բացառութեան համարեա 5—6 տարեկանից սկսած բոլորն էլ գիտեն։

Ահա թէ ինչ է ասում պրօֆէսօր Շտէյնախէրը սեռական յարաբերութեան մասին։ «Հէնց որ մարդու օրգանիզմը հասունանում է, նրա մէջ արթնանում է բոլոր այն գործարանների գործունէութիւնը, որոնք մինչ այդ հանգիստ գրութեան մէջ էին գտնվելում։ Այդ ժամանակ նրան անյայտ մի զգացմունք հրապուրում է դէպի հակառակ է սեռը, ձգտելով սերտ միանալ, որի նպատակն է սեռի ծաղկումն։ Պտղաբերելու այս հակումը, որը կապված է հզօրագոյն զգայնական հաճոյքներով և բաւականութիւններով, ունի իր անվերջ աղդեցութիւնը։ Բայց սեռական հակումն է մի ձգտումն—իր լուման էլ ձգել բանական արարածների գոյութիւն ունեցող ցեղի պահպանման համար հակառակ սեռի հետ արենակցելու միջոցով, իր սեպհական «եսը» լիովին ձուլելու միջոցով։ այս ոյժը գրդում է պատանուն դէպի վճռական քայլ, նրա մէջ մուծում է զուարթութիւն և

էնէրգիա։ Սակայն պատանին հասնելով սեռական զարգացման, առնականութեան, յաճախ չէ իմանում իր գաղտնի և կարևոր նշանակութիւնը — լինել իսկական այր, ընդունակ հայր իր որդւոց համար, լինել ցեղապետ իր սերնդի։ Իսկ չէ որ պատանին սեռական զարգացման հասնելով դառնում է այր։ Նա սեռական հակման շնորհիւ կատարում է այն, ինչ որ նրանից պահանջում են բնութեան օրէնքը, աշխարաշինութեան կանոնները։ Առողջ է, ուժերով լի, այն տղամարդը, որը ամուսնական կեանքին անձնատուր է լինում բնական ճանապարհով, հակառակ սեռի իդեալով, երբ կապվում է իր սիրած կնոջ հետ։ Բնական են և յաւէտ անխախտելի այն օրէնքները, որոնցով երիտասարդ այրը պէտք է առաջնորդվի հետևեալ կարևոր հարցերը վճռելիս։ — Նա պէտք է ապրի միայն իր անձնականը պահպանելու, թէ նրա համար, որ աշխարհ հանէ, արտադրէ նոր էակներ։ Ի՞նչ կերպ և ի՞նչ ճանապարհով նա կարող է այդ կատարել։ Պարտաւո՞ր է կատարել, ունի՞ իրաւունք կատարելու իր սեռական կոչումը։ Նայեցէք ծաղիկներին։ Մեծագոյն փառահեղութեան ամենաբարձր կէտի վրայ է տեղի ունենում հակառակ սեռերի փոխադարձ զուգաւորութիւնը։ ծաղիկը հակում է դէպի միատեսակ անհատը, արականը դէպի իգականը։ ծաղիկը միայն դէպի ծա-

դիկը, թէրթիկը թէրթիկին, վարդը դէպի վարդը։ Սա բաւարար ցուցմունք է այն բանի, որ մարդը վայելք կատանայ միմիայն դէպի մարդը, այսինքն իրան հաւասար էակը, տածած սիրոյ մէջ։ Այլ մարդը իր սեռական հակման մէջ պէտք է անձնատուր լինի միայն կնոջը և այստեղ չը պէտք է գոյութիւն ունենան մեր սեռից դուրս էակներ, մեր բնութիւնից հեռու արարածներ։

Վերոյիշեալ ցիտատից պարզ երեսում է ընդհանրապէս սեռական կեանքի և մասնաւորապէս սեռական յարաբերութեան բուն նշանաբանը։ Բացի այդ, սեռական յարաբերութիւնը որպէս մի կազդուրիչ և միևնոյն ժամանակ անփոխարինելի ֆունկցիա մարդկային էութեան մէջ, զուարթացնում և ոգեսորում է մարդուն, տանելի է դարձնում մարդկային կեանքի նոյնիսկ աննըպաստ և ծանր պայմանները, գէթ ըոպէտկան քաղցր հաճոյքի գրկում մոռացնելով առօրեայ խժդութիւնները։

Պրօֆէսոր Ալբրէխտը ասում է. —

«Առանց տարակուսելու կարելի է ասել, որ սեռական հաճոյքի չափաւոր վայելումը աւելացնում է մարդու բոլոր գործարանների կարովը, բաց է անում ախորժակը, կանոնաւորում է մարսողութիւնը և հետևաբար ընդհանուր սընդհառութիւնը։ Ուղեղը աւելի ընդունակ է դառնում աշխատելու և զբաղվում է երջանկու-

թեան և յոյսերի խորհուրդներով։ Մարդ դառնում է բարեացակամ և քաղցրաբարոյ։

Մինչդեռ սեռական յարաբերութեանց յաճախակի և անտեղի ի չարն գործադրելը չափազանց վատ հետևանքներ է առաջացնում։ Ահա թէ ինչու։ Սեռական յառաբերութեան միջոցին ամբողջ օրգանիզմը ենթարկվում է մերձեցման ակտի ազդեցութեանը և աջակցում էնրան։ Ջրպային համակարգութիւնը սաստիկ լարվում է։ արիւնը արագ և ուժգին կերպով մարմի բոլոր մասերից դիմում է դէպի սեռական գործարանները, որից և առաջանում է միւս գործարանների ըոպէական թուլացումն։ շնչառութիւնը արագանում է։ սիրտը սկսում է արագ զարկել։ Այս ամենով բացատրվում է այն երեսյթը, որ մերձեցումից անմիջապէս յետոյ մարդ զգում է մի տեսակ յոդնածութիւն, թմրութիւն։ Ապա ուրեմն պարզ և հասկանալի պէտք է լինի այն, որ սեռական անդադրում յարաբերութիւնները սաստիկ արագ և ծանր կերպով հիւծում, քայլքայում են մարդու օրգանիզմը։ Դա բնութեան սահմանած անխուսափելի օրէնքն է։ նա պարգևելով հաճոյքի դիւթիչ զգացմունքը, միևնույն ժամանակ սահմանել է պատիժ անժուժկալ և մոլի մարդկանց համար։ Ոչ մի մոլութիւն այնքան չէ կործանում մարդու կեանքն ու երջանկութիւնը, որքան սեռական մոլութիւնը։ Ամե-

նաառողջ, յաղթանդամ և առոյգ տղամարդը դեռ ծաղիկ հասակում կարող է մոմի նման հալվել, հիւծվել և անժամանակ ծերանալ։ Սերմը անընդհատ վատնելուց առաջ են գալիս հետևեալ ծանըր հետևանքները օրգանիզի մէջ։—սաստիկ սակաւարիւնութիւն, մկանների թուլութիւն, թրմրութիւն. ջղային սիստէմի ծանր խանգարումն, տեսողութեան նուազումն և երբեմն լիակատար կուրութիւն, ողնուղեղի և սեռական կենտրոնի փափկութիւն, մտաւոր և հոգեկան աշխարհի անկումն, յաճախ ապուշութիւն և խելացնորութիւն։ Սեռական անչափաւոր մերձեցումներից թուլանում են թոքերը և թոքախտը դիւրութեամբ բռն է դնում նրանց մէջ. առաջանում է ամբողջ օրգանիզմի արագ քայքայումն, և կեանքը կորցնելով հիւսնդի աչքում իր հրապոյրը, ստիպում է նրան վերջ դնել իր ուժասպառ և քաշքառուկ գոյութեանը, վերջի վերջոյ անժուժկալութեան անմիջական հետևանքները են սեռական թուլութիւնը և անկարողութիւնը (impotentia), որոնց մասին մենք կը խօսենք առանձնապէս գրքիս երկրորդ մասում։ Կըքերի գերի դարձած մարդու երեսի գոյնը սաստիկ դեղնում է, սփոթնում, աչքերը խորն են ընկնում, որոնց տակ զգալի կերպով նկատելի է մուգ-կապտագոյն շերտ. աչքերի մէջ կորչում է փայլը և կենապառ հոգին չէ արտացոլվում նրանց հայեաց-

քում. ծնկները շուտ են յոգնում, քայլելիս ծալվում են և յաճախ դողդողում. գլխացաւը հանգիստ չէ տալիս. տխուր, մելամաղձոտ տրամադրութիւնը մեւցնում է անհատի աշխուժութիւնը: Մէջքում, առաւելապէս ստորին մասում երեան է գալիս մի տեսակ ներքին ցաւ, որը գիշեր ցերեկ յամը ցաւում է և խլում հիւանդի քունըն ու հանգստութիւնը: Այսպիսի մարդը խուսափում է ժողովրդից, չի հետաքրքրում հասարական ոչ մի գործով. այլ միայն սեռական մտապատկերներն ու արհեստականապէս առաջացրած կրքերն են սթափեցնում նրան:

Պրօֆէսոր Ալբրէխտը ասում է. «Տրփասիրութիւնից աւելի է քնասվում ստամոքսը, որը ամբողջ մարմնի մատակարարն է: այդ պատճառով ստամոքսի պաշտօնները կանոնաւորապէս չեն կատարվում. փորկապութիւնը և փորլուծութիւնը յաջորդում են միմեանց. աղիքները ծածկվում են կեղտի շերտով, ստորին աղիքների երակները լցվում են արիւնով, ուռչում են և առաջացնում են զանազան հիւանդութիւններ: Բայց այդ առաջ են գալիս տեղական բորբոքումներ, ամորձիքների ուռոյցք, միզանցքից մաղասային արտաթորումն, դժուարամիզութիւն և այն»:

Կրքամոլութեան ամենավատ հետևանքը լինում է մարդկային ազնուագոյն ցեղի այլասե-

ռումն, Նկատելի է, որ տարէցտարի աւելանում են խելագարների, ջղայինների, խելացնորների, թուլակաղմների և արատաւորների լէզէօնները: Հստնոյն Ալբրէխտի «Թրանսիայում, մանաւանդ Փարիզում, բժշկական քննութիւններով հաստափած է, որ խելագարների մեծագոյն մասի պատճառը հեշտասիրութիւնն է»: Ո՞ւմ յայտնի չէ, որ սեռական անօրմալ կեանքի շնորհիւ տարածվում և տարէց տարի հսկայական ծաւալ են ստանում զանազան վարակիչ վեներական ախտեր, որոնք հիւծում և այլասեռում են մարդկային ցեղը: Այդ ախտերից ամենաթունաւորը, սիֆիլիսը, նուաճել է արդէն ամբողջ երկրագունդը, տիրապետելով թէ քաղաքակիրթ եւրոպացուն և թէ վայրենի աւստրալիացուն: Մի հեղինակ գրում է. «Մարդկութեան վշտի, տանջանքների, հիւանդութիւնների մեծ մասը, որոնք ձնշում են աշխարհը, առաջ է գալիս սեռական յարաբերութիւնը ի չարը գործադրելուց և անժուժկալութիւնից: Իրանց ուժերը վատնելով կրքին բաւականացնելու վրայ, մարդիկ քայքայում են իրանց առողջութիւնը և բախտաւորութիւնը, և իրանցից խլում են հոգեկան բարձր գարգացման հասնելու հնարաւորութիւնը: Սովորական կրքին գոհացումն տալուց մեծանում է հիւանդ և արատաւոր մարդկանց թիւը, որոնք գեռ չը ծնված դատապարտվում են դժբաղաւ-

թեան՝ իրանց ծնողների մեղքերից։ Այս մոլութիւնները և սոսկալի հետևանքները առաջանում են ֆիզիոգիական օրէնքը չը գիտենալուց։ Մարդու սեռական բնութեան մասին առողջ հասկացողութիւն տարածելը կը նպաստէ իսկական, ճշմարիտ հայեցքի մշակման, սեռական յարաբերութեանց մասին, և անփորձ մարդկանց յետ կը պահէ կործանիչ սխալներից։

Թուելով անժուժկալութեան և անչափաւորութեան վատ հետևանքները մենք բոլորովին տրամադիր չենք յուսահատեցնել կրքամոլներին։ Ի միթարութիւն և ի յոյս նրանց պէտք է շեշտենք, որ եթէ նրանք վազօրօք և ժամ առաջ թողնեն կրքերին ծառայելը և դիմեն հմուտ, խելացի մասնագէտի, կարող են առողջանալ, վերադարձնել իրանց սպառված ուժերը. կեանքը նորից հրապուրիչ կը դառնայ նրանց համար։ Սակայն անկեղծօրէն պէտք է ասենք, որ վայ ի բնէ թուլակազմ և հիւանդու մարդկանց. որոնք ամենաանխիղճ կերպով անձնատուր կը լինեն հեշտանքներին. որովհետև նրանք դիմում են դէպի յաւիտենական կորուստ և յետագայում ոչ մի հմուտ բժիշկ և ոչ էլ կախարդական որևէ ոյժ չեն կարող փրկել նրանց մտաւոր, բարոյական և ֆիզիքական կորուստից։

Անհրաժեշտ է նկատել նաև, որ սեռական մոլի յարաբերութիւնները աւելի շատ վնասում

են տղամարդին, քան թէ կնոջը, որովհետև կինը որպէս կրաւորական դեր կատարող չի լարում իր ֆիզիքական և հոգեկան ուժերը։ Բացի այդ տղամարդը անձնատուր լինելով մնյագուրդ հաճոյքների, շատ շուտ զրկվում է կրքից և բնական ցանկութիւնից, և այրական ամենակրակոտ հասակում. նրա մէջ հանգած է լինում ինքնածին հակումը այնուհետև նա արհեստականապէս և մեծ ջանքերով է առկայծեցնում կրքի մնացորդները։ Սրանից հասկանալի պէտք է լինի այն, թէ ինչու տնտեսապէս ապահով և ընտանեկան պայմաններով ըստ երեսութիւն բաղդաւոր ջահիլ կինը, արհամարհելով իր երիտասարդ ամուսնուն, ծածուկ կերպով ուրիշ տղամարդկանց գրկումն է վինարում իր հեշտանքի բաւականութիւնը։ Յաճախ հէնց այս գաղտնի հանգամանքի մէջ են թագնված ներկայումս ընտանեկան հաւատարմութիւնը և երջանկութիւնը խորտակող պատճուները։

ա. Կանոնաւոր մերձաւորութիւն

Սեռական յարաբերութիւնը կամ մերձաւորութիւնը կամ անոնաւոր է, երբ տղամարդը առողջ է, չափաւոր. երբ բնածին կիրքն է դրդումնը անդէպի մերձաւորութիւն, և վերջապէս, երբ սեռական գործարանները մնացել են առողջ և էրէկցիան (կանգնումը) կատարվում է նօրմալ

չափով։ Պատանեկան զգայուն և գայթակղվող հասակը խոհեմ անցկացրած այր մարդը սեռական յարաբերութիւնից ստանում է աննկարագրելի զգայնական հաճոյք և հոգեկան զուարթութիւն։ Նա առողջ կերպով կատարելով իր այրական գերը և բաւականութիւն տալով կնոջը, իր ընտանեկան և հասարակական երջանկութիւնը ապահովեցնում և անխախտ է պահում մինչև վերջ։ Նրա ամուսնական առագաստը մնում է սուրբ և օտարների համար անձեռնմխելի։

Բ. Հասունութիւն

Թէ Երբ, որ հասակում պէտք է սկսել սեռական յարաբերութիւնը, այդ օրէնքը սահմանել է բնութիւնը—այսինքն, երբ որ հասունանան սեռական գործարանները և նրանք ինքնաբերաբ պահանջ զգան կնոջ հետ մերձենալու։ «Հասունութեան շրջանի ամենահետաքրքիր պահանջը անկատած մերձաւորութիւնն է, ասում է բժիշկ Այվոլին։ Երբ սեռական գործարանները հասնում են իրանց զարգացման գագաթնակէտին, այն ժամանակ օրգանիզմը զգում է մի նոր ցանկութիւն, մի հզօր պահանջ սեռական մերձեցման։ Այս ցանկութեան կամ այս պահանջի զիստաւր աղբիւր պէտք է ընդունել տըզամարդի մօտ սերմի, իսկ կնոջ մօտ ձուիկի

գոյանալը»։ Հասունութիւնը միաժամանակ և միենոյն տարիքում չէ տեղի ունենում երկրագնդի վրայ. կլիման, կեանքի պայմանները և կենցաղավարութիւնը մեծ ազդեցութիւն ունեն հասունութեան վրայ. Հիւսիսային սառն երկրաներում մարդու սեռական բնոյթը հասունանում է աւելի ուշ, քան հարաւային տաք երկրներում։ Կովկասում աղամարդի հասունութիւնը սկսվում է 16—20 տարեկան հասակում։ Այդ շրջանում ամբողջ օրգանիզմի մէջ տեղի են ունենում մի շարք փոփոխութիւններ, օրինակ, ձոյնը ուժեղանում է և գառնում առնական, երեսի ու մարմնի վրայ բուսնում են մազեր, քայլուածքը դառնում է զօրեղ և հաստատուն, կամքը զօրանում է. սեռական զործարանները պահանջ են զգում. առնանզամը երբեմնակի գրգովում է և կանգնում, այս երկոյթը տեղի է ունենում աւելի յաճախ առաւօտեան դէմ անկողնու մէջ։ Այսպիսով պատանին մտնում է առնական շրջանը։ Եթէ մինչև այս յեղաշրջման կարեոր ժամը կազմուածքը չէ հիւծվել ձեռնաշարժութիւնից և սեռական վաղաժամ մերձաւորութիւններից, այդպիսի կազմուածքը մինչև խորին ծերութիւն կը պահպանէ առնական կարողութիւնը, սեռական կեանքից քաղելով սահմանեալ հաճոյքները։ Նօրմալ սեռական ընդունակութիւնը տևում է մինչ 60—70 տարեկան

հասակը, թէպէտ եղել են դէպքեր, երբ 80—90
տարեկան ծերունիներ կարողացել են մերձաւու-
րութիւն ունենալ: սրանք բացառութիւններ են,
որոնք թերևս ներկայ անբարոյական դարում չեն
կարող կրկնվել:

գ. Մերձաւութեան չափը:

Սեռական յարաբերութեան չափը որոշելը
դժուար է՝ դա կախված է կազմուածքից և սե-
ռական գործարաններից. ինչ որ մէկի համար
չափազանցութիւն է, միւսի համար նոյնը կա-
րող է լինել նօրմալ: Ամենաճիշտ ժամանակն այն
է, երբ ցանկութիւնը առաջանայ ինքնարերա-
բար. իսկ արհեստական միջոցներով, օրինակ,
տրփական պատկերներով, կեղտոտ երևակայու-
թիւններով, կանանց մերկութեան հետ շնափայ-
ել կերպով խաղալով, կիրք առաջացնելը վնա-
սակար է և վատառողջ: Սակայն կամքի ուժից
զուրկ և մոլի մարդկանց համար բժիշկները սահ-
մանել են աղիւսակներ մերձաւորութեան հա-
մար, որոնք տարբեր են: Մենք աւելի համա-
կրելով բժիշկ Տաղաւարեանի առաջարկած ցու-
ցակին, առաջ ենք բերում իսկութեամբ.

«20—30 տարեկան օրընդմէջ

30—40 տ. շաբաթը երկու անգամ

40—50 տ. շաբաթը մի անգամ

50—60 տ. 2 շաբաթը մի անգամ

60—70 տ. ամիսը մի անգամ

70 էն վերջ մշտնջենական դադար, ապա
թէ ոչ ծերունիի ուժերն կը ջլատին և մահն կը
հասնի. ոմանք 60-նէն վերջ կը պահանջեն դա-
դար»:

դ. Սեռական յարաբերութիւնը արգելվում է

Ծանր սւ խրոնիկական հիւանդութիւն ու-
նեցող մարդիկ հնարաւորութեան չափ պէտք է
խեղեն կրփի ձայնը, հակառակ դէպքում նրանք
ոչ միայն վնասում են իրանց առանց այդ էլ
տկար մարմնին, այլ և իրանց ստեղծածնոր էա-
կին, որովհետև այդպիսի մերձեցումից առաջա-
ցած սերունդը կը լինի հիւանդու, թուլակազմ,
արատաւոր, և փաթաթվելով հասարակութեան
շնորին, կը դառնայ մի անպիտան բեռն: Սեռա-
կան յարաբերութիւնից խուսափելու են ընկնե-
ւորները, խելապակասները, հոգեկան ու ջղային
լուրջ հիւանդութիւններով տառապողները, Աըր-
տի տկարութիւն և թոքախտ ունեցողները բո-
լորովին թողնելու են սեռական կեանքը, հակա-
ռակ դէպքում կարողեն յանկարծամահ լինել
հէնց մերձաւորութեան ժամին: Սեռական յա-
րաբերութիւնից հեռու պիտի մնան հարբեցող-
ները, որոնք ալկօհօլի քայքայիչ աղղեցութիւ-
նից ներկայանում են որպէս ջղային և հոգեկան
հիւանդներ: Զափից դուրս վնասակար է հարփած
ըոպէին մերձաւորութիւն ունենալը, որովհետև

այդ միջոցին թուլացած ջղերը սաստիկ լարվելով աւելի և թուլանում են, Այդ ժամանակ կարող է առաջանալ ձեռքերի և ոտքերի դողոց, կաթուածահարութիւն և այլն, որոնք կարող են մնալ անբուժելի և կը կրծատեն հիւանդի ապրելու տարիները:

Ե. Սեռական յարաբերութեան ձեւը

Քաղաքակիրթ և բարոյական ազգերի մէջ յարաբերութեան ձևն այն է, որ գոյութիւն ունի և մեզ մօտ, այսինքն կինը ներքեւից պառկած, իսկ տղամարդը վերևից երես առ երես: Այս ձեի մերձաւորութիւնից համեմատաբար շատ քիչ են տուժում մարմի միւս գործարանները, քան թէ ուրիշ այլ և այլ ձևերի մերձաւորութիւնից, Սիրող և նուիրված կինը միմիայն երես առ երես կատարվող յարաբերութիւնից է ստանում կատարեալ հաճոյք, երբ նա գրկում է իր սիրած տղամարդին և համբոյրներով գորեղացնում փոխադարձ տրփանքը: Մինչդեռ ուրիշ անյարմար և անվայել ձևերով կատարված մերձաւորութիւնից, թէկուզ իր սիրած տղամարդի հետ, ոչ միայն չէ ստանում զօրեղ հաճոյք և զգայնականութիւն, յաճախ նոյնիսկ զլում է: Երես առ երես, համբոյրներով համեմատված յարաբերութեան ըոպէին նորգործող և ներ-

գործվող կողմերն էլ տրամադրվում են, հոգեկան էքստազի մէջ ընկնում: Հետևաբար այսպիսի յարաբերութիւնից բեղմնաւորված սերունդը լինում է առողջ, գուարթ և ընդունակ: Յաւօք սրտի պիտի խոստովանենք, որ ներկայումս բարոյապէս ընկած մարդկանց փչացած երկակայութիւնը զանազան ցինիկ ձևեր է ստեղծել իբր թէ կիրքը ուժեղացնելու և բաւականութիւնը կրկնապատկելու նպատակով: Օրինակ՝ յարաբերութիւն են ունենում յետևից՝ շան նըման, աթոռի վրայ նստած, կնոջ մի ոտը տղամարդի ուսին դրած, կողքից, ոտքերի վրայ կանգնած և այլն ցոփութեան հասցրած ձեերով: Շեշտում ենք, որ այս կործանիչ երկոյթը բարոյապէս այլանդակված և կրքի ճահիճում խըրված մարդկանց հիւանդ ուղեղի հեշտասիրութեան հետևանք է: Սոյնանման թշուառ մարդիկ չեն գիտակցում, որ աննօրմալ պօզաներով կատարած մերձաւորութիւնը համազօր է օնանիզմին, որ այդ ճանապարհով արագ կերպով թուլացնում են իրանց ջղային սիստէմը և վաղաժամ վատնում են օրգանիզմում եղած ամբողջ կիրքը: Նրանք շուտով են զրկվում տրփանքից և դառնում են կրքազուրկներ: Նրանք չեն զիտակցում, որ անպարկեշտ մերձաւորութիւններից կնոջ սեռական գործարանը տուժում է, և բացի այդ կինը՝ զիջելով աննօրմալ տղամարդի

կեղտուա առաջարկներին, կորցնում է իր փայլը, իր գրաւչութիւնը որպէս կին, և իրան ստորացնում է փողոցներում յարաբերութիւն կատարող շների չափ։ Այլանդակ ձևերի մերձաւորութիւն կատարելու ցանկութեան ախտով անհամեմատ աւելի վարակված են տղամարդիկ, քան կանայք։ Պէտք է յիշենք նաև, որ երկրագնդիս միքանի անքաղաքակիրթ և վայրենի ցեղերի մէջ նոյնպէս գոյութիւն ունեն մերձեցման տարբեր ձևեր, սակայն սրանք առաջանում են այդ մարդկանց վայրենի լինելուց և վայելչութեան ու առողջապահութեան մասին գաղափար չունենալուց։ ուստի յիշեալ դէպքում երևոյթը դատապարտելի չէ որպէս գիտակից մեղկանք։ Ամփոփելով մեր ասածները, կրկնում ենք, որ սեռական յարաբերութեան զիտակցական ձևափոխութիւնները սաստիկ վտանգաւոր են առողջութեան համար և բարոյապէս դատապարտելի, իսկ ընդունված կանոնաւոր մերձաւորութեան ձևն է երես առ երես պառկած։

զ. Մերձաւորութեան կանոններ։

Քանի որ սեռական յարաբերութիւնը մեծ ազդեցութիւն և հետևանք ունի ֆիզիքական ու հոգեկան աշխարհների վրայ, ուստի անհրաժեշտ է գիտենալ որոշ կանոններ, ըստ որոնց կատարած յարաբերութիւնը ոչ միայն մնասակար չի լինի մարմի համար, այլ նոյնիսկ օգտակար։

1. Կարելի է մերձենալ, եթե մարդ իրան զգում է զուարթ և ուժեղ։ 2. Եթե առանց գրգռիչ միջոցների կամ խմիչքների մարդ պահանջ է զգում սեռական մերձաւորութեան։ 3. Մերձաւորութեան ցանկութիւն պէտք է առաջացնել նաև կնոջ մէջ վայելուչ և բնական միջոցներով։ 4. Մերձաւորութիւնից առաջ և յետոյ սեռական գործարանները լուանալ մաքուր գոլ ջրով և 20/0 բորակաթթուի լուծուածքով (Борная кислота)։ 5. Մերձաւորութիւնից առաջ առնանդամը քսել գլիցերինով կամ վազելինով, որպէսզի նա ֆիզիքական ցաւ չը պատճառէ կնոջ քնքոյշ գործարանին։ Կեղտուա առնանդամով կոսիտ և ցաւեցնող մերձաւորութիւնը ոչ միայն հաճոյք չէ պատճառում կնոջը, այլ ընդհակառակն, յաճախ բունցի նուրբ և թաց թաղանթը դրգուելով, առաջացնում է նկատելի և աննկատելի հիւանդութիւններ, որոնցից տանջվողը միշտ լինում է թոյլ կինը, և տղամարդը չի կարողանում ըմբռնել իր զոհին պատճառած տառապանքներ։

է. Մերձաւորութեան միջոցին նախազգուշութեան կանոններ։

Ոչ ոքի համար գաղտնի չէ, որ մեր երիտասարդները մինչև ամուսնութիւնը, իրանց ամենալաւ հասակը անց են կացնում յայտնի

և ծածուկ պոռնիկների գրկում։ Եւ քանի որ վեներական ախտերը (սիֆիլիս, շանկը, տրիպէր) տարածվում են մերձաւորութեան միջոցով, ուստի անհրաժեշտ ենք համարում միքանի նախագդուշութեան ցուցմունքներ անել հասարակական կանանց մօտ յաճախող անդուսպ մարդկանց։ 1. Պէտք է խուսափել յարաբերութիւն ունենալ այն կնոջ հետ, որ սաստիկ նիհար է, դժգոյն, աչքերի տակը նկատվում են կապտագոյն փոսեր և երբ ճակատի վրայ կան կասկածելի բշտիկներ (ԸԱՊԵ)։ 2. Սնպայման պէտք է ուշագրութիւն դարձնել ձեռների և ոտքերի վըրայ եղած վարակիչ բշտիկներին, որոնք յայտնի են վեներական քոս անունով։ 3. Դիտել կուրծքը և ծծերը, որոնց վրայ յաճախ լինում են վարակիչ մութեկարմրագոյն բծեր։ 4. Սոհասարակ սովորութիւն անել մերձաւորութիւնից առաջ հնարաւորութեան դէպքում դիտել կնոջ ամբողջ մարմինը, որի վրայ գտնվող ամեն մի կասկածելի բիծ կամ վէրք կարող է լինել վեներական ու վարակիչ, ուստի և խուսափել այդպիսուց։ 5. Մերձաւորութեան միջոցին երբէք չը համբուրվել օտար կնոջ հետ, մանաւանդ շրթունքներից, որովհետեւ սիֆիլիսի և թոքախտի բացիները շատ զիւրին կերպով անցնում են բերանից բերան համբուրվելիս։ Օտար կնոջ հետ յարաբերութիւնից յետոյ անմիջապէս պէտք

է միզել։ Մի բժշկի կարծիքով դա անպայման նպատակայարմար է և միակ միջոցն է վարակվելուց զերծ մնալու։ Եթէ մերձաւորութեան ժամանակ հիւանդութեան թոյնը ներս է մտել տղամարդի միզանցքը, միզելիս նա յետ է մըղ վում մէզի հետ։ իսկ սրսկելով կարելի է, ընդհակառակն, թոյնը աւելի խորը տանել և վարակել։ Թէպէտ մերձաւորութիւնից անմիջապէս յետոյ անդամը կանգնած ըոպէին դժուար է միզել, բայց և այնպէս նրա թուլանալուն պէս պէտք է միզել։ Միզելուց յետոյ հարկաւոր է լուացումն կատարել զանազան դեղային լուծուացքներով, որոնք ընդունակ են սպանել հիւանդութեանց բացիներին։ Մի կողմ թողնելով գօրեղ և թունաւոր դեղների լուծուացքները, որոնք դեղատնից տրվում են միմիայն բժշկի ստորագրութեամբ, մենք կը թուենք այնպիսի միջոցներ, որոնց միշտ և ամեն ոք կարող է ձեռք բերել առանց ժամանակ կորցնելու։ կամ բժշկի ստորագրութիւնը ստանալու։ Դրանք են —գինու քացախ, լիմօնի հիւթ, կարմիր գինի, գինու սպիրտ, սապոնի սպիրտ, սապոն, խլորաջուր, խլորակիր, սովորական աղ, բորակ, կրաջուր, շիպ և այլն։ Մրանցից որևէ մէկը գորքը քանակութեամբ պէտք է լուծել մի բանի բաժակ սովորական կամ զտած ջրի մէջ և լուանալ սեռական գործարանները։ Մերձաւորութիւնը

վնասակար է կնոջ ամսական արիւնհոսութեան միջոցին։ Զը խօսելով կնոջ համար առաջացած ծանր հետևանքների մասին, կը յիշենք միայն տղամարդի վնասները. առնանդամի գլուխը կեղտոտ արիւնից կարող է բորբոքվել, անդամամաշկի տակ կարող են առաջանալ բշտիկներքացի այդ կարող է նորոգվել հին և խրոնիքական տրիպէրը. միզանցքը կարող է բորբոքվել և առնանդամի գլուխը ուռչիլ։ Լաւ կը լինի սպասել արեան ընդհատվելուց դեռ էլի 3 օր, ապա մերձանալ։ Վտանգաւոր է մերձաւորութիւն ունենալ հարբած ժամանակ։ Այս մասին Պրօֆէսոր Ալբրէխտն ասում է. «Սեռական հաճոյքների վնասակար և սաստիկ տկարացուցիչ դորձադրութիւնն էլ հարբած վիճակի վայելքն է. Մեր ասածը չի վերաբերվում մի երկու գաւաթ խմիչքից առաջացած զուարթ րոպէին, որովհետև դա բարձրացնում է միտքը և թոյլ է տալիս, որ զուարթութեան բաժակին ուրախութեան մի զաւակ էլ ընկերանայ։ Մինչդեռ հարբածութիւնը տկարացնում է և ապականում ամբողջ մարմինը։ Ամուսնացած մարդիկ զգոյշ պիտի լինեն, որ հարբած ժամանակ սիրոյ հաճոյքը չը վայելեն։ Նոյնպէս ոչ ոքի խորհուրդ չեմ տալ հարբած ժամանակ իր կնոջ հետ պառկել, որովհետև դրանից առաջանում է գարշանք»։

լ. Ժուժկալութիւն
Մենք խօսեցինք սեռական չափաւորութեան և անչափաւորութեան մասին. այժմ տեսնենք, թէ ի՞նչ ազդեցութիւն ունի մարմինի վրայ սեռական յարաբերութիւնից զերծ մնալը, այսինքն ժուժկալութիւնը։ Այս մասին մինչև այժմ չը կայ գիտնական որոշ կարծիք. այլ կան տարբեր և նոյնիսկ բոլորովին հակառակ կարծիքներ։ Իւրաքանչիւր գիտնական անձնական հայեցակետըն է առաջ մղում։ Մէկի կարծիքով ժուժկալութիւնը չափազանց օգտակար է, միւսի կարծիքով, ընդհակառակն, չափազանց վնասակար։ Սակայն ստուար մեծամանութիւնը ընդունում է այդ երկու ծայրահեղ հայեցքների միջակետը։ Անտարակոյս է այն պարզ երկոյթը, որ իւրաքանչիւր օրգան կենդանական աշխարհում ստեղծված է որոշ դեր խաղալու ամբողջ կեանքի շրջանառութեան մէջ և ունի իր որոշ ֆունկցիան։ Եթէ մենք ստիպողաբար զրկում ենք որևէ օրգանի իր ֆունկցիայից, այն ժամանակ նա, անգործ մնալով, վնասվում է և կորցնում իր ընդունակութիւնը, իր նշանակութիւնը։ Դրանից էլ տուժում է ամբողջ մարմնի նօրմալ կենսունակութիւնը։ Օրինակ, երբ մենք զրկում ենք ստամոքսը կերակրից և մշտապէս քաղցած մնում, ստամոքսը պահանջ է զգում գործելու, կերա-

կուր մարսելու և չունենալով սնունդ, հիւանդանում է, կորցնում մարտղական ընդունակութիւնը, խանգարվում է. ապա նիհարում է և ամբողջ կազմուածքը, նոյնը պէտք է ասել նաև սեռական գործարանների մասին։ Սերմը մեծքանակութեամբ ամբարվելով մարմի մէջ և բընական ճանապարհով չը գատարկվելով, ստիպված առաջացնում է երազախար և ցերեկվայ սերմահոսութիւն, որոնք հետզհետէ յաճախակի կրկնվելով փասում են մարմին։ Բացի այդ մենք մեռցնելով բնութեան սահմանած մերձաւորութեան ցանկութիւնը և զերծ մնալով յարաբերութիւնից, մեղանչում ենք բնութեան պարտադիր օրէնքի դէմ։ Այժմ մենք առաջ կը բերենք յայտնի գիտնականների կարծիքներից մի մի կտոր, թողնելով ընթերցողներին նրանցից որին հաւանելը և համակրելը։ Պրօֆէսոր Ալբրէխտն ասում է. «Երբ այրմարդու մարմինը կատարեալ զարգացած է, մօրուքը բուսած, ձայնը հաստացած, մարմի շարժումները զօրաւոր են և դիւրաթեք, երբ սեռային դրդումը զգացվում է առանց պատճառի և ցանկութեան գոհացում տալը ուժգնապէս արթնանում է, այդ ժամանակ ժուժկալութիւնը ունենում է վտանգաւոր հետևանքներ։ Լաւ կազմաւորված և սերնդագործելու ընդունակ մարդը պէտք է ամուսնանայ. իսկ եթէ ականջ չը դնէ բնութեան այդ

ստիպողական պահանջին, այն ժամանակ առաջ կը գան հիւծիչ, սպառիչ ջեռուցումներ, և սըրանք եթէ նոյնիսկ տեղի են ունենում առանց սերմահոսութեան, յամենայն դէպս, առաջացնում են միզանցքի, ամործիքների և սերմագեղների բորբոքումներ, կծկումներ, անձկացումներ. ծննդագործարանների մէջը և վրան գոյանում են ուռոյցքներ, որոնք ջղերի և երակների վրայ ճնշում գործադրելով զգացնել են տալիս բնական գրգիռը։ Զափազանց ժուժկալութիւնից մվասվում է ոչ միայն մարմինը, այլև միտքը ենթարկվում է բոլոր այն հիւանդութիւններին, որ ցոյց տուինք իբրև հետևանքներ բնական կամ հակաբնական եղանակով տեղի ունեցած սեռային հաճոյքի անչափաւոր վայելքի։ Հազուադէպ չեն այն ժուժկալները, որոնք ենթարկված են մելանխոլիայի, իստէրիկայի և խելագարութեան։ Ես տեսել եմ տղամարդիկ, որոնք սեռային հաճոյքի համար մոլեգնել են և գոհացումն տալու համար կատաղել են. և այսպիսի վայրկեանների մէջն էլ գործվում են սպանութիւններ և ուրիշ տեսակ եղեռնագործութիւններ։ Զը գոհացուցած սեռային ցանկութեան սօսկալի, բայց ճըշմարտագոյն, պատկերը տեսնել ցանկացողը թող կարդայ էօժէն Սիւի «Գաղտնիք Փարիզի» գըրքում Սիսելլիի և նօտար Ֆէրրանի դէպքերը, և համողվի ասածիս։

Հակառակ այս կարծիքի պրօֆէսոր բժիշկ
Ֆօրէլը գրում է. «Մարմնի մէջ սերմի հաւաք-
ման վասակարութեան մասին չը պէտք է նոյ-
նիսկ մտածել: Սերմը վասակար մնացորդ չէ, ինչ-
պէս մէզը կամ կղկղանքը, Մի շարք փորձեր են կա-
տարվել, երբ մարդուն սրսկել են կաշուի տակ
սերմահեղուկ կամ թէ կենդանիների ամորձիք-
ներից քամած ջրալի հիւթը: Այս սրսկումները
բարերար ազգեցութիւն են ունենում: Ապացու-
ցած է, որ սրսկման շնորհիւ մեծանում է մը-
կանների գործունէութիւնը: Ինչպէս յայտնի է,
ֆիզիքական վարժութիւնները ընդհանրապէս
բարձրացնում են մեր մկանների աշխատանքի
ընդունակութիւնը: Այս երկոյթը աւելի մեծ
չափով է տեղի ունենում, երբ ամորձիքների
հիւթը կամ սերմը սրսկում են մարմնի մէջ. այն
ժամանակ մկանները և ջղերը անհամեմատ քիչ
են յոգնում և աւելի շուտ էլ վերականգնվում
են: Այս փորձերը լիովին ներդաշնակում են հը-
նագոյն այն մէթօդին, ըստ որի ամենածանր
ֆիզիքական աշխատանքներ կատարում էին մի-
այն սեռական ամենատեսակ հաճոյքներից զերծ
մնալու, այսինքն ժուժկալութեան դէպքում:
Ուստի և յոյների և հոռվմայեցիների մէջ ըմբիշ-
ները սեռական յարաբերութիւնից ժուժկալ էին
մնում, ինչպէս հիմա անում են մեր սպօրսմէն-
ները, երբ նրանք պատրաստվում են:

Այս բանը համակերպվում է նաև հոգեկան
գործունէութեանը. դրան ապացոյց գիտնական-
ների և գեղարուեստագէտների փորձերը: Ժուժ-
կալութեան միջոցին երեկի սերմը ծծվում է
մարմնի, մէջ իսկ նրա բաղկացուցիչ մասերը թա-
փանցում են արեան մէջ: Եւ սա ոչ թէ վա-
սակար, այլ բարերար ազգեցութիւն է ունե-
նում: Կարելի է առարկել, որ սերմի ներթա-
փանցումը օգտակար է միայն այն դէպքում,
երբ նա որոշ չափից չէ անցնում, որ չափից ա-
ւելի առատ ներս ծծվելու կարող է վասակար
լինել: Ի պատասխան այս առարկութեան, պէտք
է ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որ
ընութիւնը հոգացել է այդ մասին. դրա համար
սահմանել է զիշերային երազախաբութիւնը,
որ ընական է և նօրմալ, եթէ տեղի չէ ունե-
նում յաճախ: Բացի այդ, սերմի արտադրու-
թիւնը ինքնըստինքեան պակասում է, երբ չէ
գործում սեռական գործարանը, Ամորձիքների
հետ ներկայ դէպքում կատարվում է այն երե-
ւոյթը, ինչ որ ուրիշ շատ օրգանների հետ: Ե-
թէ չենք օգտավում նրանցից, այն ժամանակ ա-
րիւնը աւելի սակաւ է հոսում դէպի նրանք.
Դրանից էլ նրանց մննդառութիւնը նուազում է
և կենսունակութիւնը թուլանում»:

Այստեղ յարգելի գիտնականը իր վերջին
ֆրազով ոչ միայն հաստատում է մեր վերոյի-

շեալ ասածը, այսինքն թէ սեռական գործարանը, ինչպէս և իւրաքանչիւր օրդան, անգործ մնալով կորցնում է իր ընդունակութիւնը, այլև, կարծես նա հակասում է ընութեան կարգադրութեանը – բազմացման օրէնքին։ Զէ՞ որ առողջ սեռական գործարանից զուրկ մարդը մի խղճուկ արարած է դառնում, և բժշկական լեզուով կոչվում է իմպոտէնտ, որ նշանակում է սեռական կարողութիւնից զուրկ հիւանդ։ Ուրեմն անտեղի ժուժկալութիւնը ոչ թէ բարիք է, այլ չարիք։ Ապա շարունակում է բէիշկ ֆօրէլը իր կարծիքը, որտեղ փոքր ինչ փոխում է իր ասածը և կարծես հակասութեան մէջ ընկնում։ «Որ առողջ, նօրմալ մարդու սեռական ձգտումը անընկճելի է, որ նա պէտք է բաւարարութիւն ստանայ, այդ մասին խօսք անգամ չի կարող լինել։ Զի կարելի վիճել այն մասին, թէ սեռականապէս հասուն տղամարդու ձգտումը մեծ անհանգստութիւն է պատճառում, որ երբեմն մեծ ոյժ է հարկաւորվում այդ ձգտումը զսպելու համար։ Բայց տղամարդկանց մեծամասնութեան սեռական հակումը երբէք այնպէս զօրեղ չէ, ինչպէս նրանք հաւատացնում են. և նրանցից իւրաքանչիւրի ցանկութեան ոյժը հիմովին կախված է նրա կենցաղավարութիւնից և վարչից։ Եթէ մենք դործադրենք բանականութիւն և կամք, առողջ տղամարդկանց մեծ մասը դիւ-

ըութեամբ զերծ կը մնայ ինքնազդացման լուրջ խանգարումներից՝ նոյնիսկ սեռական անբաւարար գոհացման ժամանակ էլ։ Որպէսզի այս բանը աւելի ճիշտ պարզաբանվի, մենք նախ պէտք է հանգամանքօրէն զննենք, թէ ինչպէս է երեան գալիս սեռական հակումը։ Մինչև անգամ ամենակրքոտ աղամարդն անգամ միշտ զրգոված չէ լինում սեռական տեսակէտից։ Մերձաւորութեան ցանկութիւնը առաջանում է միայն երբեմնապէս, սովորաբար, արտաքին ազդեցութիւնների շնորհիւ, և կարճ միջոցում էլ ցանկութիւնը ոչնչանում է, երբ ընդհատվում է արտաքին ազդեցութիւնը»։

«Ցանկութիւնը առաջ է գալիս ջղերի գրբգումից։ Սեռական գործարաններից, առաւելապէս առնանդամից, գնում են դէպի ողնուղեղ զզայուն նեարդեր։ Եթէ սրանք զրգովեն, օրինակ, առնաղնամի շփումից, այդ գրգիռը տրվում է դէպի առնանդամը դիմող ջղերին և արեան անօթներին։ Հետեանքը լինում է այն, որ արիւնը մեծ քանակութեամբ դիմում է դէպի անդամի խոռոչաւոր մասերը։ Այսպէս, արիւնը հաւաքվում է անգամի մէջ, անդամը ուռչում է, մեծանում և կարծրանում։ Այս էրէկցիան (կանդնումը) կարող է տեղի ունենալ մեր գիտակցութիւնից բոլորովին անկախ, կարող է լինել բէֆլեկտօր (անգրադարձ) երկոյթ։ Նա կարող է ծա-

գել նաև առանց տրվանքի զգացման, ինչպէս
օրինակ պատահում է փոքր մանուկի հետ մի-
զապարկի լիքը ժամանակ։ Մինչդեռ հասած
տղաների գրգիռը, որ սեռական մասերից ջղերի
միջոցով անցնում է ողնուղեղ և ապա զլխի ու-
ղեղ, նոյնիսկ հասունութեան շրջանից վաղ ա-
ռաջացնում է հեշտասիրական զգացմունք, սե-
ռական հասունութեան ժանանակ առնանգամի
կարծրացումը բացի գրգիռից արթնացնում է
թեթևանալու և կնոջ հետ մերձաւորվելու պա-
հանջ։ Օրինակ, հեշտասիրական մտքեր են ծա-
գում, երբ քնած միջոցին լցված միզապարկի
ազդեցութեան տակ անդամը կարծրանում է
(այս երևոյթը աւելի յաճախ տեղի է ունենում
առաւօտեան դէմ, ուստի և կոչվում է «առա-
ւօտեան կանգնում»)։ Երէկցիա և սեռական ցան-
կութիւն կարող են ծագել, որպէս լցված միզա-
պարկի ժամանակ, նպանապէս ուղիղ աղիքի ճշն-
շումից, սեռական մասերի շփումից շորի հետ
կամ ոտքերը կծկած միջոցին։ Առանց նորանոր
ցուցմունքների պարզ է, որ կարելի է նախազ-
գուշացման շատ միջոցներ ձեռք առնել նմանօ-
րինակ գրգիռներ չառաջացնելու համար։ Պէտք
է խուսափել երեկոյեան շատ խմելուց, հոգալ
կանոնաւոր մարսողութեան մասին, հազնել լայն
ըրիւկ, ճնշողութիւն չը գործադրել սեռական
գործարանների վրայ, ինչպէս օրինակ ոտքերը

ծալած միջոցին կամ թէ տաք վերմակներ ծած-
կելիս, իզուր չը պէտք է ձեռքով շօշափել սե-
ռական մասերը. պէտք է մաքրութիւն պահպա-
նել լուացումներ և լողացումներ կատարելով,
հոգալ կաշուի հիւանդութիւնների շուտափոյթ
բժշկութեան մասին և այլն։ Ինչպէս որ տեղա-
կան գրգիռը կարող է առաջացնել հեշտասիրա-
կան մտքեր, նմանապէս որոշ երեակայութիւն-
ներ կարող են առաջ բերել տրվանք և էրէկցիա։
Եթէ խուսափենք նմանօրինակ գրգոիչ մտքերից,
կարելի է մեծ չափով սանձահարել ցանկութիւնը։
Սակայն որքան յաճախ է տեղի ունենում հա-
կառակը։ Սեռական հակումը զարթեցվում է
աղհեստականապէս և բորբոքվում թեթևամիտ
խօսակցութիւններով, անառակ գրքեր կարդա-
լով, անվայել պատկերներ դիտելով, թատրոնա-
կան բաց ներկայացումներով և այլն։ Եթէ ներ-
կայումս սեռական ցանկութիւնը այդպէս վաղ
է երեան գալիս բազմաթիւ տղամանուկների
մէջ, ուրեմն դրանց 90% -ը հետևանք է գայ-
թակղութեան և ոչ թէ դա ինստինկտի բնական
արթնացումն է։ Եւ հէնց նոյն կեղծ գրականու-
թիւնն ու կեղծ գեղարուեստը, որոնք անդա-
դար ամեն միջոցներով գրգում և բորբոքում
են մեր զգայնականութիւնը, սկսում են քարո-
զել ցանկութեան կարծեցեալ անընկճելի լինելը։
Ինչպէս որ մենք ընդունակ ենք զգուշանալ սե-

ուական զրգիռից, կարող ենք նաև զսպել առաջացող ցանկութիւնը: Երբ անթիւ երիտասարդներ առանց յետ նայելու անձնատուր են լինում սեռական ցանկութեան, սա երբէք ապացոյց չէ այն բանի, թէ նրանք պէտք է այդպէս վարվեն: Նրանք միայն չեն ուզում լուրջ կերպով զսպել իրանց: Թուլութիւնը, հետաքըրքը ութիւնը և երեխայական պատուասիրութիւնը, որ նրանց դրդում է վարվել ուրիշների նման և գիտակցութեան բռնադատումը աւելի մեծ դեր են խաղում, քան թէ բուն ցանկութիւնը...»:

Պրօֆէսօր Կրօֆտ—Էթինգի կարծիքով տղամարդկանց սեռական ժուժկալութիւնը կարող է վատ հետևանքներ ունենալ միայն ջղային հիւանդութիւններ և անբնական սաստիկ սեռական ցանկութիւն ունեցողների համար: Ընդհակառակն, նրա կարծիքով, նօրմալ զարգացում ունեցող տղամարդկանց համար ժուժկալութիւնը վտանգաւոր չէ ոչ ջղային և ոչ էլ հոգեկան կեանքի համար:

Ֆիզիոլոգ Ա. Ֆօն—Հալլէրը ժուժկալութեան աղբեցութիւնը փորձել է և նկարագրել նէնց իր վրայ: Սկզբում նա զգում էր գլխացաւ և ծանրութիւն մարմնի մէջ, իսկ կարճ ժամանակից յետոյ սեռական ձգտումները անյայտացան և նրանց փոխարէն զգալի եղաւ հոգեկան ու մարմ-

նական ուժերի աճող թարմութեան հաճելի ըդպացմունքը:

Ահա և մի ուրիշ բժշկի հայեցակէտը, որը այդ երկու ծայրահեղ կարծիքների միջնորմն է և աւելի ընդունելի: «Եթէ չափազանց շատը մնասակար է առողջութեան համար և խանգարում է կազմուածքի նօրմալ կենսունակութիւնը, որա հակառակ սաստիկ քիչն էլ նոյնպէս զգալի մնաս է հասցնում: Մեր մարմի իւրաքանչիւր օրգանը մի մասն է կազմում զարմանալի մարդ-մեքենայի: Երբ որ և է օրգանի գործունէութիւնը թուլանում է և կամ կանգառնում, այն ժամանակ ամբողջ մեքենայում զգացվում է աւելի: կամ պակաս անկանոնութիւն: Եթէ իւրաքանչիւր օրգան ունի իր որոշ դերը, ապա ուրեմն պէտք է զգուշանանք կանգնեցնել նրա ընթացքը: Պարզ, խելացի իմաստը մեզ ցոյց է տալիս, որ բնութեան օրէնքները խախտելու ձգտումը առաջանում է միայն անկարողութիւնից կամ թէ բանականութեան խըդալի շեղումից: Իսկական իմաստութիւնը կայանում է կեանքի վայելքներից չափաւոր կերպով օգտվելու մէջ, և ոչ թէ սաստիկ ժուժկալութեան մէջ: Հետևագէս, ինչպէս անչափաւորութիւնը, նոյնպէս սեռական յարաբերութիւնից անչափ ժուժկալութիւնը վնասակար է մեր օրգանիզմի կանոնաւոր գործունէութեան համար.

և դեռ չի կարելի համոզված ասել, թէ սըն է աւելի վնասակար, առաջինը թէ երկրորդը։ Ուշբեմն պէտք է ընտրենք ոսկեայ միջակէտը և չը շեղվենք ոչ այս և ոչ այն կողմը, միաժամանակ համակերպվելով մեր կազմուածքին, նրա ուժին և առողջութեան։



VI ՍԱՏԻՐԻԱԶ ԵՒ ՊՐԻՎՊԻԶՄ

Սեռական կեանքի այլանդակութիւններից մէկն էլ այսպէս կոչված սեռական կատաղութիւնը կամ սատիրիազն է։ Այս հիւանդութիւնը կայանում է նրանում, որ մարդու մէջ առաջ է գալիս կատաղի և անդուսպ ցանկութիւն։ Առանդամը շարունակ կանգնած է լինում առանց որևէ արտաքին գրգիռների կամ ազդեցութեան։ ծագում են մենձենալու անյագ ցանկութիւն, սերմի հոսութիւնները, երազախարք։ Սրա պատճառներն են, սեռական մոլութիւնները, օնանականութիւնը, կիրք զարթեցնող դեղերի գործածութիւնը, սկսվող սուսունակը, շագանակածև գեղձի ուռոյցքը, և երբեմն էլ առողջ մարդկանց սաստիկ ժուժկալութիւնը։ Սատիրիազի միջոցին խանգարվում է ջղային սիստէմը, յաճախ տուժում են տեսողութիւնը, լսողութիւնը և միւս զգայարանները։ Սատիրիազով կամ սեռական կատաղութեամբ բռնված մարդուն թւում է, թէ փողոցում պատահած իւրաքանչիւր կին մերկ է, և մօտենում է նրան մերձաւորութիւն ունենալու համար. զառամեալ, այլանդակ ծեր կինը նրա աչքերին երևում է որպէս չքնաղ

գեղեցկուհի, Յաճախ ձեռքն ընկած ամեն մի
առարկայ նրան թւում է որպէս կին, օրինակ
բարձը գրկում է, համբուրում, փաղաքշում և
նրա հետ սկսում է մերձաւորութիւն կատարել,
մինչև որ վերջապէս առատօրէն կը թափվի
սերմը, այս ժամանակ միայն նա սթափվում է
խայտառակ դրութիւնից: Սատիրիազով հիւանդը
ամեն մի կնոջ շփվելիս կամ թէ երևակայու-
թեան մէջ կին պատկերացնելիս ենթարկվում է
սերմնահոսութեան. նրա աչքերը լցվում են
արիւնով և փայլատակում են, բերանում երեսում
է փրփուր, երեսը կարմրում է և այլն: Այսպիսի
գրգռված միջոցին հիւանդը ընդունակ է դառ-
նում մինչև անգամ մի գիշերվայ ընթացքում
սեռական յարաբերութիւն ունենալ միքանի տաս-
նեակ անգամ, և իհարկէ, պարզ է, որ յետոյ
ուժասպառվում և անկողին է ընկնում: Սատի-
րիազի վախճանը սովորաբար լինում է ջղային
և հոգեկան սաստիկ խանդարումն և մահ. իսկ
երբ հիւանդը առողջ ու յաղթանդամ կազմուած-
քի տէր է, իր ժամանակին ձեռք առած բժշկու-
թեամբ կարող է ազատվել հիւանդութիւնից և
դրա մահացունչ հետևանքից: Նկատված է, որ
սատիրիազով հիւանդանում են աւելի շուտ ա-
մուրիները, քան թէ ամուսնացածները: Բարե-
բաղդաբար պէտք է ասել, որ սատիրիազ հիւ-
անդութիւնը շատ հազուադէպ է պատահում:

Նոյն հիւանդութիւնը գոյութիւն ունի նաև կա-
նանց մէջ, որ կոչվում է Նիմֆօմանիայ կամ
Նիմֆայամոլութիւն:

Սատիրիազին շատ նման և նոյնպէս հա-
զուադէպ գոյութիւն ունի և մի ուրիշ ախտ, որ
կոչվում է պրիապիզմ: Այս դէպքում հիւանդի
առնանդամը շարունակ կանդնած է լինում և
մեծ անհանգստութիւն է պատճառում. սակայն
բացակայ է լինում կիրքը, մերձաւորութեան
ցանկութիւնը:



ար ամեն զին օտքակար հաւաքարքանով մաս
ունի առջևանաժամկեց և նախուն դա չէ ն գումա

VII ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԶԵՌՆԱՇԱՐԺՈՒԹԻՒՆ

Վատ և անբարյական դաստիարակութիւնը
հէնց մանուկ հասակում առաջ է բերում այն-
պիսի վնասակար սովորութիւններ, որոնք հետ-
արգինետէ ամրանալով մարդու մէջ դառնում են
կործանիչ ախտեր ոչ միայն իրեն՝ անհատի, այլ
և ամբողջ սերնդի համար: Ուրիշ որևէ անբա-
րոյականութիւն այնքան շուտ և ամուր չէ
պատուաստվում մանուկ հոգու և մարմի մէջ,
որքան սեռական անբարյականութիւնը: Պատա-
նու անմեղ հոգին, վառվուն միտքը և ձկուն
մարմինը շատ շուտ ազդվում են շրջապատող
ապականված մթնոլորտից և վարակվում հեշտա-
տասիրութեամբ, որը և ապագայում բաւական
ծանը հետեանքներ է պատճառում նրա կեան-
քին: Ամենատարածված ախտը պատանի հասա-
կում օնանականութիւնն է: Անկասկած, ամեն
մարդ գաղափար ունի այդ կեղառոտ ախտի մա-
սին, և թերես մարդկանց 80—90% ը պարա-
պել է դրանով: ուստի նրա մասին մենք կը
խօսենք շատ համառօտ և մի փոքրիկ տեսու-

թեամբ ճնարաւորութեան չափով կը պարզա-
րանենք այդ վնասակար սովորութեան էութիւնը:

Օնանականութիւնը այնպիսի հակաբնական
գործողութիւն է, որի միջոցով մարդ դուրս է
հոսեցնում իր սերմը: Օնանականութեան երե-
ւոյթը կատարվում է՝ անդամը ձեռքերով կամ
այլ իրերով շփելով, որի ժամանակ նաև անհրա-
ժեշտաբար սաստիկ լարվում է երևակայութիւնը
հեշտասիրական ցինիկ պատկերներով: Օնանա-
կանութեան ախտը նոր չէ և հնումը, գեռ Քրիս-
տոսից դարեր առաջ, նա գոյաւթիւն ունէր: Այդ
ախտը օնանականութիւն է կոչվում Յակոբի
թոռ Օնան (Յովնան) Մարգարէի անունով, որով-
հետև նա միշտ ունենում էր թերի մերձեցումներ
և հեշտասիրական հաճոյքներ էր ստանում զա-
նազան արհեստական միջոցներով: Օնանակա-
նութիւնը կամ ձեռնաշարժութիւնը հաւասարա-
պէս տարածված է թէ հարուստ և թէ աղքատ,
կրթված և թէ անկիրթ դասակարգերի մէջ: Նա
վարակել է թէ հասակաւորների և թէ անչափա-
համաների, տղամարդկանց և թէ կանանց: Եւ
օրէցօր նա հսկայական չափեր է ստանում, քայ-
քայելով բազմաթիւ սերունդներ: Պատանու կազ-
մուածքի մէջ դէպի հասունութիւն դիմող շրջա-
նում անժամանակ զարգանում են սեռական
գործարանները և նրա մէջ առաջ են գալիս նո-
րանոր անծանօթ ցանկութիւններ, որոնք ոչ այլ

ինչ են, եթէ ոչ սեռական կրքի սկսնակ յոյզեր։
Եթէ պատահին մեծանում է բարոյական շրջա-
նում, իրան հեռու է պահում զայթակղեցուցիչ
ազդեցութիւններից, այն ժամանակ սեռական
գործարանները իրանք իրանց բնական ճանա-
պարհով են հասնում զարգացման ծայրագոյն աս-
տիճանին. ապա միայն արթնանում է և գոհա-
ցումն է պահանջում զօրեղ կիրքը։ Սակայն ներ-
կայումս ուր է այդպիսի դաստիարակութիւն։
պատահին, հէնց սկզբից ենթարկվում է այնպի-
սի գայթակղեցուցիչ ազդեցութիւնների, որոնք
բնութեան որոշած ժամանակից վաղ զարթեցնում
են սեռական հակումն, և դիւրազգաց պատահին
շատ շուտ շնորհում է բարոյական ուղիղ ճանա-
պարհոց։ XX-րդ դարու պոռնկազրութեան գրքե-
րում լսիր ու կեղտոտ նկարազրութիւնները,
գեղարու եստի տաճարներում՝ այսինքն թատրոն-
ներում բեմի վրայ զանազան օպէրէտների ու
օպէրէտկաների ներկայացումը կանացի մերկ
մարմիններով, պրօֆէկտորների պոռնօգրաֆիա-
կան զղուելի պատկերների ցուցադրումը, կտ-
նանց նորանոր պիկանտ «դէկոլտէ» մօդաները,
երբ օրը ցերեկով կինը իր մեղկ մարմի դադա-
նի և զրգուցնող մասերն է ցուցահանդէս դնում
փողոցներում ամենապարկեշտ կերպով, ահա
այս բոլոր անբարոյականացնող երկոյթները ա-
կամայ գայթակղեցնում և հեշտասէր են դարձ-

նում պատահնուն, որը հետաքրքրվելով արգե-
լեալ պտղի երանաւէտ քաղցրութեամբ, սկսում
է անձնատուր լինել իր շինծու կրքերին։ Մե-
ծերից վախենալով և ամաչելով, բացի այդ ֆի-
զիքապէս հնարաւորութիւն չունենալով կանանց
հետ շփել, անփորձ պատահին աշխատում է
զանազան արհեստական գաղտնի միջոցներով
գրգիռ տուաջացնել իր սեռական գործարաննե-
րում։ Դրա համար նա առանձնանում է և ձեռ-
քերով, բարձերով և այլ իրերով այնքան շփում
է, տրորում առնանդամը, մինչև որ սերմը
արտաթորվում է։ Այս նպատակով թէ տղաները և
թէ աղջիկերը յաճախ, բացի ձեռքերից և փափուկ
բարձերից, գործ են ածում բանալիներ, շպի-
կաներ, մատանիներ, մոմեր և այլ առարկաներ,
որոնք այլասեռում և հակաբնական են գարձնում
նրանց մէջ սեռական ինստինկտը։ Տհաս պատա-
հին, անձնատուր լինելով օնանականութեան, չէ
գիտակցում, թէ Բնչ սոսկալի հետեանքներ ու-
նի այդ բանը. նա գաղափար չունի սերմի էու-
թեան մասին և չը գիտէ, որ իւրաքանչիւր կա-
թիլ սերմ անժամանակ արտաթորվելով, յօդնեց-
նում և կանգնեցնում է մամնաւորապէս սեռա-
կան գործարանների զարգացումը և ընդհանրա-
պէս ամբողջ մարմնի բնական ընթացքը։ Վերևի
գլուխներում արդէն յիշել ենք, որ սերմի կո-
րուստը բայքայիչ է ամբողջ մարմնի համար,

որովհետև նա նուազեցնում է արեան քանակութիւնը մարմնի մէջ:

Օնանիստը հետզհետէ աւելի է հրապուրվում իր սովորութեամբ, և ախտը սկզբում աննկատելի և ապա նկատելի կերպով մշասում է մարմնին: Օնանական ախտը ունի մի այնպիսի զօրեղ և կաշկանդիչ յատկութիւն, որ նրա ճանկերից ազատվելու համար կարեռվում են հերոսական ջանքեր: Պատանին ամեն մի յարմար լուսէ առանձնանում է և արհեստականապէս թափում իր կեանքի քաղցր հիւթը: Յաճախ նա օրական մի քանի անգամ է կատարում ձեռնաշարժութիւն: Այս ախտը տեսում է երկար ժամանակ, տարիներ և նոյնիսկ տասնեակ տարիներ, որի վերջը լինում է կամ ցաւալի վախճան և կամ ուշ սթափումն: Սերմի մասին խօսելիս, մենք ասել ենք, որ նա պատրաստվում է շատ դանդաղ. իսկ երբ հակառակ բնութեան օրէնքի բռնադատում ենք ամործիքներին անընդհատ սերմ պատրաստել, հարիւրապատկելով իրանց գործունէութիւնը, այն ժամանակ նրանք սաստիկ տուժում են և ենթարկվում ատրօֆիայի (անդամուլուծութիւն): Անխնայողաբար վիժող սերմի պատրաստութեան համար գործադրվելով մեծ քանակութեամբ արիւն, ամբողջ կազմուածքը զրկվում է իր կենսունակութեան համար անհրաժեշտ քանակութեան արիւնից, այդ-

պիսով մարմնի մէջ գոյանում է սակաւարիւնութիւն: Արիւնն էլ հետզհետէ փոխում է իր ուրակը. նա շարունակ իր ընտիր մասերը տալով սերմի ատրադրութեանը, կորցնում է իր թանձրութիւնը, դառնում է ջրալի և դժգոյն:

Ֆիզիքական քայլաբարումներին հետևում է հոգեոր ու մտաւոր խանգարումը: Օնանականութեան վայրկեանին օնանիստը իր առաջ չունենալով տրփանքի առարկան, ստիպված լարում է իր երկակայութիւնը: Սովորաբար տրփանքը և գրգիռը շատ շուտ առաջանում են հակառակ սեռերի ներկայութիւնից և շփումից, ուստի գրգիռ առաջ սերելու համար կարիք չէ լինում լարել երեակայութիւնը, քանի որ այդ դէպքում զգայնականութիւնը բնական ճանապարհով զարթեցնում է սեռական հակումն: Մինչդեռ օնանականութեան միջոցին բացակայ լինելով կանացի մարմնի շփումն ու մեղկանքը, օնանիստը պարտադրում է իր երկակայութեանը ցինիկ ու հեշտամիրական վառ մտապատկերներով նպաստել երէկցիային և սերմնահոսութեանը: Ուրեմն հասկանալի պէտք է լինի, թէ ինչու օնանականութիւնը սաստիկ մշասում է մարդուն փիզիքապէս և մտաւորապէս: Բնական յարաբերութեան միջոցին պառկած գրութեամբ մարմինը չէ տուժում, մինչդեռ ձեռնաշարժութիւնը կատարվելով ոտքերի վրայ կանգնած դրութեամբ

վնասում է ծնկներին և յաճախ առաջացնում
ծնկների գողդողոց և թուլութիւն։ Համարձակ
կարելի է ասել, որ մէկ անգամ կատարած ձեռ-
նաշարժութիւնն աւելի վնասակար է քան թէ մի-
քանի անդամ ունեցած սեռական կանոնաւոր
մերձաւորութիւնը։ Զեռնաշարժութեան միջո-
ցով սերմի անխնայ և անընդհատ վատնումի
հետևանքները պատանի հասակում անհամե-
մատ աւելի են կորստաբեր, քան թէ սեռական
անչափաւորութիւնը այրական հասուն շրջանում։
Ահա թէ ինչու։ Պատանեկան հասակում մարդու
սեռական գործարանները գեռ կատարելապէս
զարգացած չեն լինում, հոգեկան ու մարմա-
կան յոյզերը գեռ լիովին չարթնացած. սերմա-
հոսութիւնը այս շրջանում ձեռնաշարժով կամ
թէ այլ արհեստական ճանապարհով կատարվում
է բռնադատօրէն. այդ պատճառով պատանու
ճկուն կազմուածքը և զգայուն հոգին շուտ են
վնասվում։ Մինչդեռ այրական հասակում մար-
դու սեռական գործարանները կազմակերպված
են լինում, սեռական և այլ զգայնական յոյ-
զերը բնածին կերպով արթնացած, ուստի այս
գէպօւմ մարմինը այնքան չէ տուժում, որքան
առաջին գէպօւմ։ Յնանականութեան զոհը դառ-
նում է մի խղճուկ արարած, որի համար կեանքը
յաճախ կորցնում է իր արժեքը, ևնա իր ապրելու

մէջ այլկս ոչ մի նպատակ չը գտնելով, վերջ է
դնում իրան անձնասպանութեամբ։
Այժմ համառօտ, սակայն պարզ գոյներով,
նկարագրենք օնանականութեան և ընդհանրա-
պէս սերմի առատ վատնումի հետևանքները։
Մարմինը, կորցնելով այդ կարևոր հեղուկը, նի-
հարում և տկարանում է։ Արագութեամբ պա-
կասում են օնանիստի փիզիքական ու հոգեկան
ուժերը, բթանում են մտաւոր ընդունակութիւն-
ները. մարդ զառնում է դանդաղաշարժ, անըն-
դունակ, բթամիտ և վերջի վերջոյ կատարեալ
ապուշ։ Զեռնաշարժութեան միջոցին երևակայ-
ութիւնը և ջղերը սաստիկ լարվելով, խանդար-
վում է ամբողջ ջղային սիստէմը, սւստի առաջ
են գալիս մելամազձոտութիւն, անքնութիւն,
իստէրիկա, ոտքերի ու ձեռքերի գողդողոց, ընկ-
ներութիւն (լուսնոտութիւն) և երբեմն խելա-
գարութիւն։ Սեռական գործարանները վերջի
վերջոյ յոգնում են և միանգամայն թուլա-
նում այն աստիճանի, որ այնուհետեւ ա-
մեն մի հասարակ շփում կամ հեշտանքի մտա-
պատկեր առաջացնում է սերմահոսութիւն։ Օ-
նանիստը միշտ ենթակայ լինելով իր հիւանդ ե-
րևակայութեան ստեղծած արփական մտապատ-
կերներին և լրականութեան մէջ գտնվող կա-
նայք աւելի նսեմ ներկայանալով նրա աչքին,
նա խորշում է կանանցից և առհասարակ մարդ-

կանց ներկայութիւնից։ Իր հետ համակերպվող կնոջից նա ոչ մի գրգիռ չստանալով, դարձեալ առանձնանում է և երեակայութեան մէջ վերաստեղելով աւելի հեշտալից կանանց, կատարում է ձեռնաշարժութիւն։ Օնանիստը չի կարողանում համարձակ կերպով նայել մարդկանց աչքերին. առաւելիս նա խուսափում է կանանց հայեացքներից։ Արեան պակասութեան շնորհիւն րա դէմքը լինում է դժգոյն և դեղնած. աչքերը փոսն ընկած, որոնց տակ՝ կողերի ուղղութեամբ, որոշակին կատվում են մուգ—կապտագոյն շերտեր։ Երեսը ծածկվում է մանր ու խոշոր պղուկներով, որոնք մնում են բաւական երկար ժամանակ և այլանդակում դէմքը։ Ոչ մի դեղ չի ազդում այդ թարախոտ և կարմրագոյն պըզուկների վրայ, բացի այն որ օնանիստը թողնէ իր մասսակար սովորութիւնը. այն ժամանակ նրանք ոչնչանում են իրանք իրանց։ Յայտնի է, որ ստամոքսը, կանոնաւոր մարսողութեան համար, անհրաժեշտաբար պահանջում է որոշ քանակութեան արիւն. օնանականութիւնից առաջացած սակաւարիւնութեան պատճառով նա զրկվելով արիւնից, խանգարվում է և չէ կարողանում կանոնաւոր կերպով մարսել ստացած սընունդը։ Այդպիսով առաջ է գալիս ստամոքսի կատարը և այլ հիւանդութիւններ։ Բերանի մէջ զգացվում է դառնութիւն, լեզուն ծածկվում է

սպիտակ փառով. պատահում են սրտախառնութիւն, գկոտոց. յաճախ բերանից փչում է վատ հոտ։ Ստամոքսի անկանոն գործունէութիւնից խանգարվում են նաև աղիքները, որի հետևանքը լինում են միմեանց յաջորդող փորկապութիւն և փորլուծութիւն։ Աղիքների մէջ զգացվում են ցաւեր և ծակոցներ։ Պարզ է ուրեմն, որ ստամոքսն ու աղիքները չը կարողանալով անհրաժեշտ սնունդ մատակարարել ամբողջ օրգանիզմին, վերջինս նիհարում է, տկարանում և թուլանում։ Սերմի վատնումից վնասվում են թոքերը, որոնք մարմնի քնքոյշ և թոյլ գործարաններն են կազմում։ Թոքերի տկարանալու հետևանքները լինում են շնչարգելութիւն, ճնշումն կրծքի մէջ, թոքերի բորբոքում, հազ, բըրոնիստ և վերջապէս մահաշունչ թոքախտ։ Տիւանդի տեսողութիւնը խանգարվում և նուազում է. նրա աչքերին յաճախ երեսում են զանազան մանր կարմրագոյն կէտեր օդի մէջ, այսինքն պատահում է հալիւցինացիա. վերջի վերջոյ նա դառնում է այն աստիճան կարմատես, որ առանց ակնոցի երկու քայլ տարածութեան վրայ չի կարողանում ճանաչել մարդկանց։ Պատահել են դէպքեր, երբ օնանիստները բոլորովին կուրացել են։ Լսողութիւնն էլ կամաց կամաց ենթարկվում է փոփոխութեան, նրա ականջներին

լսելի են լինում իրականութեան մէջ բացակայ
շուկաներ և զօղանջիւն:

Արեան նուազումից և նրա անկանոն շըր-
ջանառութիւնից խանգարվում է սրտի կանոնա-
ւոր գործունէութիւնը. սիրտը երբեմն բարա-
խում է այնպէս ուժեղ, որ փոքր տարածու-
թիւնից տեսանելի և լսելի է լինում նրա զար-
կը. երբեմն էլ, ընդհակառակն, թուլանում և ա-
րագանում են նրա հարուածները: Ամբողջ մար-
մինը ծածկվում է բծերով, ուռոյցքներով, թա-
րախոտ պզուկներով. առաջ են գալիս ջրակալու-
թիւն և ջրգողութիւն: Կաշին դառնում է մի
տեսակ լսլրծիւն, քրտնքոտ, դժգոյն և արձա-
կում է ուրոյն անհաճոյ հոտ, Սերմի սպառու-
մից վնասվում են շարժիչ մկանները, որոնք հե-
տքզնետէ նիհարանալով, թուլանում են և կորց-
նում իրանց շարժունութիւնը: Այս պատճառով
օնանիստները միշտ լինում են դանդաղիոտ, ծոյլ
և վատ տրամադրութեան մէջ, Զայնը նոյնպէս
թուլանում է, դառնում գողդոջուն և խոպոտ:
Օնանիստին թւում է, թէ նրա մարմնի վրայով, ա-
ռաւելապէս մէջքի ուղղութեամբ, ման են գա-
լիս մըջիւններ:

Ի լրումն այս ամենի ապա տկարանում են
գանգուղեղը և ողնուղեղը, որոնց մէջ փափ-
կանում են սեռական կենդրոնները: Յիշողու-

թիւնը իսպառ բթանում է և մարդ հաւասար-
վում է անբան կենդանու:

Վերոյիշեալ համառօտ նկարագրութիւնից
արդէն ընթերցողը կարող է երկային թէ
որպիսի թշուառ և խղճալի մի էակ է ներկայա-
ցնում իրենից օնանականութեան զոհը:

Թէ ինչ աստիճան զարհութելի հետևանք-
ներ ունի օնանականութեան ախտը, մենք մեր
վերոյիշեալ նկարագիրը հաստատելու համար
այժմ թարգմանաթար բերենք փաստեր հոչա-
կաւոր բժիշկների մէմուարներից:

Դէ՛եանտը գրում է. «Վերջնական հետևանք
կարող է լինել ծննդաբերական գործաբանների
զգայնականութեան ոչնչացումը: Այս ձևերը,
որոնք սկզբում նպատակի են հասցնում (այս-
ինքն սերմի հոսեցումն), այլև շուտով չեն ա-
ռաջացնում ցանկալի զգայնութիւնը, որը հետք-
հետէ թուլանում է և զրօյի հաւասարվում: Այս
ձևերը դեռ կարող են առաջ բերել էրէկցիա և
մինչև անգամ ցաւոտ գրգռումն, բայց նրանք
արդէն չեն կարող այնպիսի բաւականութիւն
պատճառել, ինչպէս սկզբներում: Լաւ կը լինէր,
որ այսպիսի թուլութեան ժամանակ մոռացվէին
անցեալ հաճոյքները. սակայն նրանց յիշողու-
թիւնը ապրում է մեծ ուժով և դժբաղդ զոհին
գրգռում է շարունակել իր էկսցէսները (տրփա-
կանհաճոյքները): Այս յիշողութեամբ տանջվելով,

յղփացած օնանիստը գրգոռում է իր լքեալ գործարանները։ Գործադրած ձևերը գոհացուցիչ հետևանքների ընհասցնելով, նա հնարում է նորանոր հրէշային և այլանդակ ձևեր։ Նրա նախկին մտքերը թւում են անմեղ և անպախարակելի՝ համեմատած նորերի հետ. և օնանականութիւնը համեմատած նոր ախտի հետ արժանի կը լինի գովասանքի։ Սկզբում օրդադմ առաջ բերող ձևերը այժմ նպատակի չեն հասցնում. առնանդամի մակերևոյթը, որի վրայ երբեմապէս կենտրոնացած էր զգայնականութիւնը, կորցրել է բաւականութիւն պատճառելու ընդունակութիւնը, և հիմա հարկ է լինում աւելի խորը թափանցել, ուր դեռևս ձեռք չեր հասել։ Այս գործողութիւնները, որոնք առաջ ցաւեցնող էին, այժմ կատարվում են առանց դժուարութեան, հպատակելով ներքին ուժին։ Օնանիստը վիրաւորում և պատառուտում է մաերը, կանգ չառնելով ոչ մի բանի առաջ, միայն թէ հնարաւորութիւն ստեղծէ հեշտասիրական հաճոյը զգալու։ Այս դրութիւնը տեսում է այնքան ժամանակ, մինչև որ վտանգաւոր գործողութիւններն էլ կորցնում են իրանց ոյժը և կամ առաջ են գալիս ծանր հիւանդութիւններ։

Բժիշկ Շովարը նկարագրում է հետևեալ դէպքը։ — Լանգէտօկցի հովիւ Գաբրիէլ Հալիէնը

օնանականութեան նուիրվեց 15 տարեկան հասակում, օրական ձեռնաշարժութիւն անելով մինչև 15 անդամ։ Հասաւ այսպիսի ժամանակ, երբ սերմը շատ չնշին քանակութեամբ էր դուրս հոսում, և երբեմն երկար ջանքեր էր գործադրում հոսեցնելու համար։ Ձեռնաշարժի ըսպէին յաճախ առաջ էին գալիս մկանների կծկոտումն և սերմի փոխարէն հոսում էր միքանի կաթիլ արիւն։ Տասնևմէկ տարվայ ընթացքում նա օնանականութիւնն էր կատարում միայն ձեռքով, բայց 16 տարեկան հասակում այսպիսի ձևերից այլիս չստանալով հեշտասիրական բաւականութիւնն, նա սկսեց միզանցքը կոխել մօտ 15 սանտիմէտր երկարութեան փայտի կտոր։ Տասնեւեց տարի շաբունակ նա այս միջոցն էր գործադրում, բայց վերջապէս միզանքի թաղանթը կոշտացաւ և դարձաւ բոլորովին անզգայ. այլևս փայտի կտորը իր նպատակին չէր հասցնում։ Օնանիստը զո՞ն դարձաւ մշտական էրէկցիայի, որին ոչ մի բան չէր հանգստացնում։ Այս ամբողջ ժամանակամիջոցում նա անընկճելի զզուանք էր տածում դէպի կանայք, որ յատուկ է օնանիստներին։ Նա դարձաւ մելամաղձոտ. արհամարհում էր իր աշխատանքը և միմիայն զբաղված էր իր կրքերին գոհացնելու միջոցներ մտածելով։ Բազմաթիւ միջոցների դիմելով և չստանալով ցանկալի հետևանքը, նա յուսահատված

մի անդամ վճռեց լայնութեամբ ձեղքել առնանդամի գլուխը դէպի միզանքը տանող ուղղութեամբ։ Այս օպէրացիան նրան բաւականութիւն պատճառեց, որովհետեւ ոչ մի ցաւ չզգաց և տեղի ունեցաւ սերմի առատ հոսումն։ Այս ժամանակից սկսած, բաղդաւոր զգալով կը քերը յագեցնող իր նոր հնարագիտութեամբ, նա սկսեց յաճախ կրկնել այս փորձը և միշտ էլ նոյն հետեանքն էր ստանում։ Այսպէս շարունակ ձեղքելով անդամը, վերջիվերջոյ նկատեց, որ առնանդամը կիսել է երկու մասի միզանցքի ուղղութեամբ։ Երբ արիւնհոսութիւնը առատ էր լինում, նա արիւնը կանգնեցնում էր անդամը փոկով կապելով։ Բաժանված առնանդամի կէսերը լնդունակ էին մնացել կանգնման, սակայն նրանք ուղղութիւնը փոխել էին դէպի աջ և ձախ։ Երբ անդամը կիսված էր մինչև արմատը երկու մասի, դանակն այլևս աւելորդ էր, երկան եկան նոր ձևեր, նորյուղումներ և նորանոր փորձեր՝ հաճոյք ստանալու համար։ Ի միջի այլոց նա գործադրում էր հետեւել միջոցը՝ Վերցնում էր աւելի կարճ կառոր փայտ և կոչխում էր միզանցքի յետին մասը, որը գեռ ձեղքված չէր։ Այս միջոցով նա գրգռում էր սերմնանցքերը և առաջացնում էր սերմնահոսութիւն։ Նա սրանով բաւականացաւ 10 տարի, մինչև այն ըոպէն, երբ անզգութութիւնից փայտի կը

տորը ընկաւ միզապորկի մէջ։ Նա իսկոյն սաստիկ ցաւ զգաց և ոչ մի կերպ չը կարողացաւ փայտը դուրս հանել։ Զարհուրեկի տանջանքներից յետոյ, երբ մէզը բռնվեց և միզապարկից սկսեց արիւն երկալ, դիմեց վիրաբոյժի, որը իհարկէ, շատ զարմացաւ, տեսնելով երկու մասի բաժանված անդամը։ Բժիշկը վիրահատութեամբ միզապարկից հանեց փայտի կտորը, որը երեք ամիս մնալով պարկի մէջ ծածկվել էր կըսային նիւթով։ Լուրջ հիւնդութիւնից յետոյ նա կազդուրվեց, սակայն երեք ամիս անց մեռաւ թոքախտից, որ վաղուց առաջացել էր նրա մէջ՝ սերմի առատ վատնումից։

Դէլիանդը օրինակ է բերում մի դպրոցական ուսուցչի, որը միզանցքը գրգռում էր զանազան առարկաներով՝ սերմնահոսութիւն առաջացնելու համար։ Նա սովորաբար դործադրում էր մետաղաթել (проволոկա), որի ծայրը ծալել էր անցքի թաղանթը չը վիրաւորելու նպատակով։ Մէկ անգամ, երբ նա մետաղաթելով զրգռում էր միզանցքը աւելի կատաղի շարժումներով, մետաղաթելի ծայրը խրվեց անցքի մէջ և մնաց։ Ուսուցիչը շատ փորձեց դուրս քաշել թելը, սակայն անաջող։ Զընայելով տանջանքներին, ամօթը նրան չէր թոյլ տալիս դիմել բժշկի։ Նա մետաղաթելի դրսի ծայրը ոլորեց ա լուր բռնելու և ուժով քաշելու համար։ բայց

նրան այս էլ չը յաջողվեց, որովհետև ուժով
դուրսքաշելիս մետաղի դրսի ծայրը կոտրվեց, իսկ
ներսի մասը մնաց անցքում խրված: Յուսահատ-
ված, վախենալով մահաբեր վախճանից, նա գի-
մեց Թարդօղը-Սօմիւր բժշկին: Առնանդամը
սաստիկ ուռեց, ուռեց նաև ամորձիքապարկը+
անդամի արմատի մօտ, փորի տակ երեաց կար-
մըրութիւն, ցաւ և ուռոյցք: Մէզը բռնվեց, ե-
րեսը կարմրատակեց, աչքերը արիւնով լցվեցին,
սկսվեց զառանցանք, զարկերակը արագացաւ և
թուլացաւ: Բժիշկը քաշելով մետաղաթելը, հա-
մոզվեց, որ միւս ծայրը ամրացած էր որևէ կոշտ
մասի վրայ: Մեծ զգուշութեամբ գննելով այդ
տեղը, տեսաւ, որ երկաթը դէմ էր ընկել
կոնքի ոսկոի առաջին մասին: Այստեղում նա
վիրահատեց, մետաղաթելը երեաց, որ և հանվեց
յետանցքի միջից: Հիւանդը իսկոյն թեթեւութիւն
զգաց և կամաց կամաց առողջացաւ:

Սարայէն ճաղորդում է յիսնամեայ ծերու-
նու մասին, որը երեք տարվայ ընթացքույ ճեռ-
նաշարժութիւն էր անում զործելու ճաղով, որ
կոխում էր միզանցքը: Մէկ անգամ էլ ճաղը
ձեռքից սողաց և մնաց մեզանցքում: Մի շաբաթ
յետոյ օպէրացիայի միջոցով ճանեցին ճաղը:

Բաւական ճամարելով յիշեալ օրինակները
օնանականութեան զարհուրելի պատկերը տա-
լու ճամար, այժմ խօսենք, թէ ի՞նչ միջոցներով

կարելի է ազատվել այդ ֆասակար սովորու-
թիւնից, և թէ ի՞նչ դիրք են բռնելու ճնողներն
ու դաստիարակները փոքրահասակներին զերծ
պահելու վաղաժամ ախտերի ճիրաններից: Մա-
նուկ հասակն այնքան ներգործված է, որ ամեն
մի լաւ կամ վատ սովորութիւն շատ հեշտու-
թեամբ պատուաստվում է նրա մարմնի մէջ:
Նախ և առաջ ճնողները պէտք է աշխատեն
մանկանը մեծացնել այնպիսի պայմաններում և
բարոյական շրջանակում, որպէսզի նրա քնած
սեռական գործարանները ոչ մի արհեստական
շփում և գրգիռ չստանան: Այս տեսակէտից չա-
փազանց աննպատակայարմար և գայթակղեցու-
ցիչ է փոքրահասակ երկսեռ երեխաններին մի
անկողնում մերկ պառկեցնելը:

«Քոյր և եղբայր, կամ օտար հասակակիցներ
և կամ մեծ ու փոքր տղաներ ու աղջիկներ
միասին պառկեցնելու ապականիչ սովորութիւնն
էլ յաճախ պատճառ է դառնում ճննդագործա-
րանների կանխահաս գրգիռի, ասում է պրօֆէս-
սօր Ալբրէխտը:

Անկողնի ջերմութիւնն ինքնըստինքեան ար-
գէն գրգոման մի պատճառ է, և երբ էդ էակի,
որչափ սա փոքր ու փափուկ լինի, արտաշնչու-
թիւնը աւելանում է ջերմութեան վրայ... երբ
տաք մերկութեան հաղումը նոր գրգիռ էլ աւե-
լացնէ, այն ժամանակ անկարելի է, որ միամիտ

մանուկը իր ճղճիմ հասակում չունենայ արտա-
սովոր զգացումներ, թէպէտ իհարկէ ոչ այնպի-
սի գիտակից և ուժգին հաճոյք, որպիսին զգում
են չափահանները։ Սաստիկ մեծ հսկողութիւն
պէտք է ունենալ այն երեխանների վրայ, որոնց
մնուցանում և մեծացնում են դայեակները, ծըծ-
մայրները։ Վերջիններս շատ յաճախ միամտա-
բար և երբեմ էլ գիտակցօրէն շփում են երե-
խայի սեռական գործարանները, որից նա ըզ-
գում է ուրոյն անմեղ հաճոյք։ Ապա հետզհետէ
նա սովորելով այդ հաճոյքին պահանջ է զգում
այդպիսի շփումների։ աստիճաննաբար մեծանա-
լով, ինըը սկսում է տրորել ու զրգուել իր սե-
ռական մասերը։ այսպիսով նրա մէջ բուն է զը-
նում օնանականութիւնը։ Ուրեմն իւրաքանչիւր
որդեսէր մայր պարտաւոր է իր երեխային ան-
ձամբ կերակրել ու մեծացնել. իսկ ստիպողական
դէպքերում յանձնելով օտարների խնամատարու-
թեանը, նա պէտք է ի մօտոյ հետևէ ծծմայր-
ներին և արգելէ երեխայի գործարանների հետ
խաղալը։ Բացի դրանից օնանականութեան ծագ-
մանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ
երեխային ծեծում են, ապտակներ ու փայտի
հարուածներ են տալիս յետոյքին, ինչպէս ըն-
դունված է ասել, ուզգի են տալիս. այս դէպ-
քում ձաղկելուց արիւնը մեծ քանակութեամբ
դիմում է վերին մասերից դէպի ստորին մասե-

ըը և սեռական գործարանները. սրա շնորհիւ
նրանք առատ սնունդ են ստանում, շուտ հա-
սունանում և զգում վաղաժամ գրգիռ։ Այսու-
հետև պատահնին նպաստող պայմանների մէջ
սկսում է ձեռնաշարժութեամբ պարապել։ Նա
ընկերների վատ աղդեցութեան ներքոյ սկս-
ում է կարդալ պօռնօղրաֆիական գրակա-
նութիւնը, դիտել պարիզեան անառակութեան
ծնունդ գաղտնի ամենացինիկ պատկերներ, և
այսպիսով նա շատ շուտ ընկնում է անբարոյա-
կանութեան գիրկը և անձնատուր լինում զաղտ-
նի մեղքերի։ Ծնողներն ու դաստիարակները
ուշի ուշով պէտք է հետևեն իրանց սաներին.
յաճախ պէտք է նայեն նրանց գրքերը, գրան-
ները և այլ գաղտնի պահարանները, որպէսզի
հնարաւորութիւն չը տան մանուկներին վերոյիշ-
շեալ ապականիչ գրքերից ու պատկերներից
պահելու։ Հետեւելու է, որ մանուկներն ու պա-
տանիները անվայել խաղեր չը խաղան, լկտի
խօսակցութիւններ չանեն և զոյգ զոյգ կամ թէ
միայնակ երկար միջոցով չառանձնանան զանա-
գան կասկածելի անկիւններում։ Երեխաններին
չըպէտք է ուտեցնել ու խմեցնել գրգոիչ կե-
րակուրներ և ըմպելիքներ։ Անչափահաս սա-
ներին երբէք չը պէտք է տանել թատրոն, ցիրկ
ու սինէմատոգրաֆ այն ժամանակ, երբ ներ-
կայացվում են գայլթակղեցուցիչ ու անբարոյա-

կանացնող տեսարաններ, մերկ մարմիններով
ու վատիմաստ պօզաներով։ Իրանք, ծնողները,
պարտաւոր են մանուկների ներկայութեամբ
շատ պատշաճ և վայելուչ կեանք ցոյց տալ, ու
ոչ մի ժամանակ չը պէտք է թոյլ տան նրանց
ներկայութեամբ համբուրվել, գրկել և սիրային
տեսարաններ ներկայացնել։ Մի խօսքով, ընտա-
նեկան խելացի և բարոյական դաստիարակու-
թիւնը միայն կը փրկէ սաներին օնանական և
այլ ախտերից։ Իսկ եթէ վատ դաստիարակու-
թեան պատճառով երեխաներն արդէն դարձել
են օնանիստներ, այն ժամանակ գոնէ ծնողնե-
րը կամ ուսուցիչները պէտք է խիստ հետևեն
և ամեն մինպատակայարմար միջոցով վատ սո-
վորութեան առաջն առնեն։ Անհրաժեշտ է զի-
տենալ, որ օնանիստները շատ խորամանկու-
թիւններ են գործ գնում իրանց սովորու-
թիւնը գաղտնի պահելու համար, երկար տարի-
ներ շարունակ նրանք գաղտնի կերպով մաշում
են իրանց մարմինը, իսկ ծնողներն ու դաս-
տիարակները այդ բանին մնում են բոլորովին
անտեղեակ։ Ուստի աւելորդ չի լինի առաջար-
կել միքանի խորհուրդներ յիշեալ ախտը յայտ-
նագործելու և արմատախիլ անելու համար։—
Օնանականութեամբ պարապող երեխաները կորց-
նում են երեսի փարթամութիւնը և դալկանում։
Բոլոր մկանները հետզիետէ թուլանում են։ Նը-

րանց աչքերը ստանում են սուրճի գոյն, կամ
կարմրում են և կամ ստանում արճճի գոյն։ Նը-
րանք խորն են ընկնում, հայեացքը դառնում է
երկչու և շփոթվող։ Շրթունքները գունատ են։
դէմքի բոլոր շարժումները դանդաղ են և հար-
կադրեալ, օրինակ, ծիծաղը բռնազբօսիկ և այն։
Երեխան դառնում է տիսուր, լուռ և զուտ է
բարկանում չնչին պատճառներից։ Օնանիստնե-
րը շարունակ ձեռքերը տանում են դէպի սեռա-
կան գործարանները և տրորում։ Վատ նշաններ
են նաև շուտշուտ միզելը կամ արտաքնոց վազելը։
Զեռնաշարժութիւնից յետոյ հետքեր են մնում
սպիտակեղենի վրայ։ ուստի շատ կարեոր է ա-
ռաւօտ և երեկոյ ուշադրութեամբ զննել սպի-
տակեղենները, թէ արդեօք չեն նշամարվում կաս-
կածելի բծեր նրանց վրայ։ Այս բոլորը պէտք է
ծածուկ անել, հակառակ դէպքում երեխան, նը-
կատելով ծնողների հետախուզութիւնը, կաշխա-
տէ այլ միջոցներսվ սպիտակեղենը զերծ պահել
կեղտերից։ Օնանիստները շարունակ խուսափում
են հասարակութիւնից և աշխատում են առանձ-
նանալ։ Նրանց երեսին նշամարվում են պղուկներ։
Սեռական մասները յաճախ քրտնում են, առ-
նանդամը թօշնում է և ամորձիքները թուլանում,
կամ ընկնում։ Օնանականութեամբ պարապող պա-
տանիները սովորութիւնն ունին եղունկները կոծե-
լու։ Ահա բոլոր այն նշանները, որոնցով կարելի

է յատնագործել օնանականութեան անձնատուր
եղած անհատների ծածուկ սովորութիւնը։ Եւ
երբ այս նշաններով կամ այլ կերպ համոզվում
են այդ բանում և կամ թէ երբ ինքը՝ օնա-
նիստը խոստովանում է իր մեղքը, պէտք է համ-
բերատար ու ներողամիտ վերաբերմունքով, մը-
տերմաբար ցոյց տալ նրա ընթացքի կորստաբեր
հետևանքները, համոզել ձեռք քաշելու այդ սո-
վորութիւնից։ Ոչ մի դէպքում պէտք չէ բար-
կանալ, նախատել նրան, որովհետեւ փորձերը
ցոյց են տուել, որ խիստ վերաբերմունքը, նա-
խատինքն ու պատիժը ոչ միայն յետ չեն կասե-
ցնում օնանիստին իր սովորութիւնից, այ ընդ-
հակառակն, նա աւելի է առաջ գնում իր ըն-
թացքով։ Գուցէ ոմանք հարցնեն, թէ արդեօք
բժշկութեան մէջ չըկայ որոշ դեղ օնանականու-
թեան դէմ։ Պատասխանն է ոչ։ Բժշկական ճոխ
դեղաբանը չունի և չի ունենալ քիմիական որևէ
միջոց, որը խմելով կամ քսելով արմատախիլ
անէր օնանական ախտը։ Իւրաքանչիւր հիւան-
դութիւն բուժելի է, երբ յայտնի են նրա պատ-
ճառները և երբ վերացվում են նրանք։ Օնանա-
կան ախտը ֆիզիքական հիւանդութիւն չէ։ Նրա
պատճառը թագնված է բարոյական ու հոգեկան
աշխարհներում։ ուստի ոչ մի դեղ չի կարող ազ-
դել բարոյական հիւանդութեան վրայ բացի ազ-
նիւ ու անարատ դաստիարակութիւնից։ Անհրա-

ժեշտ է նաև կամքի ոյժ, որը ձեռք է բերվում
կեանքի որոշ պայմաններում, որոշ նիստուկա-
ցով մեծանալու դէպքում։ Իսկ երբ օնանիստը
հեռու գայթակղեցուցիչ պատճառներից, գիտակ-
ցաբար իր մարմինն ու հոգին դնէ առողջ ճա-
նապարհի վրայ, այն ժամանակ նրանք իրար
վրայ ազգելով, կազատեն նրան անբարոյական
ճահճից։ Միտքը կըթող իւրաքանչիւր գիրք կամ
զուարձութիւն, մարմինը զարգացնող, ուժե-
ղցնող ամեն մի զբունք, մարմնամարզութիւն,
աշխատանք, կամքը զօրեղացնող կենցաղ կազ-
մում են միակ սպեղանիները օնանական և այլ
վատ ախտերի դէմ։

Վերջացնելով մեր խօսքը օնանականու-
թեան կամ ձեռնաշարժութեան մասին, ամփո-
փում ենք եզրակացութիւնը հետևեալով։ —
մարդուն հէնց մանուկ հասակից անհրաժեշտ է
բարոյական սուրբ դաստիարակութիւն և խու-
սափումն ամեն տեսակ գայթակղեցուցիչ, ա-
նառակացնող հասարակական երկոյթներից։ այն-
ժամանակ միայն մարդ հեռու կը մնայ այլկայլ
վկասակար սովորութիւններից, և մարմինը մնա-
լով առողջ, նրա մէջ էլ կը զարգանան առ-
ողջ հոգի, առաքինի միտք և զօրեղ կամք։



VIII. ԵՐԱԳԱԽԱԲ
ԿԱՄ
ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍԵՐՄՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ

Մինչև այժմ մենք խօսեցինք այս տեսակ սերմնահոսութեան մասին, որը տեղի է ունենում սեռական յարաբերութեան ըոպէին և օնտնականութեան ժամանակ: Տեսանք, որ առաջին դէպում սերմնահոսութիւնը կատարվում է բնական ճանապարհով, իսկ երկրորդ դէպում սերմը հոսում է անբնական ճանապարհով, արհեստական միջոցներով: Սակայն այս երկու դէպերումն էլ սերմնահոսութիւնը տեղի է ունենում զիտակցաբար. այսինքն, երբ մարդ արթուն է, երբ գործում են գանգուղեղը, ողնուղեղը և ջղերը: Բացի վերոյիշեալներից կայ և այլ ձեփ սերմնահոսութիւն, որը տեղի է ունենում գիշերը, քնած միջոցին. ուրեմն և անզիտակցաբար, ակամայ:

Արդէն գիտենք, որ սեռական գործարանները հասունանալուն պէս սերմնագեղձերն սկսում են սերմ արտադրել, երբ սեռական յարաբերութեան բացակայութեան պատճառով սերմը մեծ քանա-

կութեամբ հաւաքվում է և տեղ չէ լինում սերմնապարկերի մէջ, այն ժամանակ բնութիւնը օգնութեան է հասնում: Քնած ժամանակ հեշտասիրական երազների ազդեցութեան տակ աւելորդ սերմը դուրս է հոսում: Այս երեսյթը կոշփում է երազախաք, որի ժամանակ զգալի էնակ բնականին համազօր զգայնական հաճոյք: Երազախաբից յետոյ, մարմինը ազատվելով սերմի աւելորդից, որը նրան անժամանակ և անտեզի գրգիռներ էր պատճառում, զգում է թեթևացած և զուարթ, ինչպէս կանոնաւոր սեռական յարաբերութիւնից յետոյ: Ուրեմն երազախաբը բնութեան տնօրինած մի իմաստուն և օգտակար ֆիզիոլոգիական երեսյթ է և ոչ թէ վնասակար, ինչպէս շատերը համոզված են: Երազախաբը բնական է և առողջաբար, երբ տեղի է ունենում ոչ յաճախ քան շաբաթը մէկ անգամ, իսկ երբ նա կը կնվում է շաբաթը մի քանի անգամ, նա արդէն դառնում է նոյնչափ վնասակար, որչափ օնանականութիւնը կամ սեռական անչափաւոր մերձաւորութիւնը: Երազախաբն էլ կախված է անհատի կեանքի եղանակից, բարոյական դաստիարակութիւնից: Երբ մարդ քնում է, իսկոյն կանգ է առնում գանգուղեղի գործունէութիւնը: Այդ ժամանակի ցերեկվայ կարգացածի, տեսածի և լսածի ազգեցութեան ներքոյ երազի մէջ պատկերանում են նրանց տպաւորութիւնները. գանգ-

ուղեղը քնած լինելով, չէ կարողանում կօնտրոլի ենթարկել ողնուղեղի և միւս ջղային կենտրոնների գործունէութիւնը. ուստի և սեռական կենտրոնները դիւրութեամբ գրգռվելով տրփական մտապատկերներից, առաջացնում են սերմնահոսութիւն և հաճոյք: Որքան բարոյական է մարդ, այնքան ուշ ուշ է տեղի ունենում երազախաք. իսկ երբ ցերեկը նա շատ կարդում է կեղտուն կարագրութիւններ, դիտում է պարփակեան ժանուրի նկարներ, կանանց ու ընկերների հետ լիրք խօսակցութիւններ է ունենում, այն ժամանակ յաճախանում է և գիշերային սերմնահոսութիւնը:

Նօրմալ երազախաքի միջոցին առողջ աղամարդի անդամը կանգնած գրութեան մէջ է լինում: Իա բացատրվում է նրանով, որ երբ նա պառկած է լինում մէջըի վրայ, մեծ քանակութեամբ արիւն է հաւաքվում ողնուղեղի և երկարած ուղեղի մէջ. դրանից առաջանում է նրանց մէջ ջերմութիւն, որի ներդութեամբ մեծանում է սեռական գործարանների անդրադարձ (բէֆլէկտօր) գրգիռը, որի միջոցին տեղի է ունենում սերմի վիժումն: Նկատված է, որ երազախաքը մեծ մասամբ կատարվում է մէջըի վրայ քնած ժամանակ: Երազախաքի ենթարկված են աւելի շատ 17-25 տարեկան պատանիք:

Շատ շատերը ճիշտ չը գիտենալով երա-

զախաքի էութիւնը, պատահած դէպքում տխրում են, վախենում, կարծելով, որ իրանց սեռական գործարանները թուլացել են, և անմիջապէս վագում են բժշկի մօտ, գանգատվում և խնդրում որևէ գեղով վերջ դնել երազախաքին: Բժշկի մէջ աւելի կարեկցութիւն առաջացնելու նպատակով նրանք երբեմն կրկնապատիկ են ասում պատահած երազախաքների թիւը, նկարագրում են՝ իբր թէ առաջացած թուլութիւնը և այլն: Սակայն դրանք սխալվում են, ծանօթ չը լինելով Փիզիոլոգիական օրէնքների հետ:

Երբ երազախաքը տեղի է ունենում սահմանեալ չափից աւելի, դա արդէն դառնում է հիւանդութիւն: Ցածախակի կրկնվող երազախաքի պատճառը, բացի վերոյիշեալ տսածներից, լինում են սեռական գործարանների թուլութիւնը, օնանականութիւնը, սեռական անչափաւութիւնը և այլն: Մտաւոր լուրջ աշխատանքը, բարոյական կենցաղավարութիւնը հեռու են պահում մարդուն գիշերային հեշտասիրական երազներից և երազախաքից: Օնանականութեամբ պարապող, անբարոյական կեանք վարող, լկար զրոյցներ անող մարդը միշտ ենթարկայ է գիշերային կրկնող սերմնահոսութիւնների: Այսպիսի դէպքերում երազախաքը տեղի է ունենում շաբաթը միքանի անգամ, ամեն գիշեր, երբեմն էլ գիշերը մի քանի անգամ: Հե-

տեանքների մասին այլես մանրամասնաբար
չենք խօսիլ, որովհետեւ նրանք նոյնն են, ինչ
որ սեռական անչափաւորութեան և օնանակա-
նութեան դէպքերում։ Հիւանդու երազախարի
բժշկութեան մասին կը խօսենք հետևեալ զլիում։



IX ՍՊԵՐՄԱՏՈՐԻԿԱ Կ'ՈՒՐ

ՑԵՐԵԿՎԱՅ ՍԵՐՄՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ

Սպէրմատօրիկան կամ ցերեկվայ սերմա-
հոսութիւնները հետևանք են սեռական գործա-
րանների կատարեալ ուժասպառութեան և թու-
լութեան։ Այս տեսակ սերմնահոսութիւնը աւե-
լի վասակար է, քան գիշերային երազների ազ-
գեցութեամբ կատարված սերմնահոսութիւնը, և
տարբերվում է վերջինից նրանով, որ ցերեկվայ
սերմնահոսութիւնը կամ սպէրմատօրիկան տեղի
է ունենում առանց հեշտասիրական հաճոյքի և
էրէկցիայի։ Սեռական կրկնակի մերձաւորու-
թիւնները և օնանականութիւնը վերջիվերջոյ
առաջ են բերում սեռական գործարանների այն-
պիսի թուլութիւն, որ սերմը ինքնաբերաբար
գուրս է հոսում անժամանակ և անտեղի կեր-
պով։ Երազախարութիւնն էլ, եթէ շուտ շուտ է
պատահում, կարող է առաջացնել սպէրմատօր-
րիկա։ Հիւանդը նոյնիսկ չէ նկատում, թէ ինչ-
պէս քամզում է իր կեանքի զօրաւօր հիւթը։
Եւրաքանչիւր հեշտասիրական միտք, կանացի

մերկ մարմնանկար, պօռնօղբաֆիական լնթերցանութիւն և գէկոլտէ հազնված կնոջ կուրծքն ու թկը առաջացնում են ակամայ սերմնահոսութիւն առանց որեէ հաճոյքի: Լինում են այնպիսի հիւանդներ, որոնք արամվայ կամ կառք բարձրացող կնոջ ոտքերը դիտելով կորցնում են սերմ: Բացի յիշեալ զլխաւոր պատճառներից, այսինքն—սեռական անչափաւորութիւնից և անսօրմալ երազականաբից,—կան նաև ուրիշ պատճառներ սպէրմատօրբէայի: Զի նստած միջոցին սեռական գործարանների շփումը պատճառ է լինում սերմնահոսութեան, որը կատարվում է երբեմն թոյլ հաճոյքի զգացմունքով. ծառ բարձրանակս ամործիքները և առնանդամը արորվելով գրգռվում են և առաջ բերում սերմի ցայտում: Խրօնիքական սաստիկ փորկապութիւնը նոյնպէս պատճառ է դառնում սպէրմատօրբէայի: Սա բացատրվում է նրանով, որ կարծր կզկզանը անցնելով ուղիղ աղիքի միջով ճնշում և գրգռում է շագանակածն զեղձը և սերմնապարկերը, որից և տեղի է ունենում սերմնահոսութիւն: Սակայն փորկապութեան գէպքում մի ուրիշ երեսյթ էլ է պատահում, որը շատ նման է սերմնահոսութեան և յաճախ շփոթվում է սրա հետ. այս մասին կը խօսենք: Ընդհանրապէս ասձ, սպէրմատօրբէա առաջացնում են այնպիսի մօմէնտներ, որոնք ճնշում և գրգռում են սեր-

մնապարկերը, սերմնացայտ խողովակները, շագանակածն զեղձը, ամործիքները և անդամը: Այդպիսի դրդիչ պատճառներ են նաև. —միջանցքի բորբոքումը (սուսունակ), միզանցքի նեղացումն (ստրիկտուրա), բոյասիլը (գեմմորոյ), աղիքների ճիճուները, որոնք շարունակ զբգում են աղիքների միջոցով, միզապարկի բորբոքումը, միզաքարերը, զանազան ուռոյցքներ յետանցը ում, մէջքի վրայ քնելու սովորութիւնը, ոգելից խմիչքների անժուժկալ գործածութիւնը կամ հարբեցողութիւնը, որից ընդհանրապէս տուժում է ամբողջ կազմուածքը և մասնաւորապէս թուշանում սերմնացայտ խողովակները: Սպէրմատօրբէայի պատճառներից մէկն էլ չափից դուրս ժուժկալութիւնն է, երբ սերմը ամբարվելով և այլևս տեղ չը գտնելով, ամեն մի չնչին աղիքութեան ներքոյ դուրս է վիժում: Դուրս հոսած սերմը յաճախ խառնվում է մէզի հետ: Եթէ խոշորացոյցով դիտենք այդպիսի մէզը, երաբեմն կը գտնենք նրա մէջ սերմնակենդաններ: Սպէրմատօրբէան լուրջ հիւանդութիւն է, որից ամբողջ մարմինը թուլանում է, սեռական ցանկութիւնը նուազում և առաջ է գալիս սեռական անկարողութիւն, իմպօտէնցիա: Այս մասին մենք կը խօսենք մասնաւորապէս զրքիս երկրող մասում:

Անհրաժեշտ է իմանալ, որ կայ և մի ուշ

բիշ երևոյթ, շատ նման սպէրմատօրրէային, որ
վախեցնում է անտեղեակ մարդկանց։ Շատ ան-
դամ մէզի մէջ առաւտները նկատվում են թե-
լերի նման մարմիններ, որոնք չեն տարբեր-
վում սերմի մասերից։ Քնից արթնանալով եր-
բեմն ոմանք զգում են անդամի ծայրը թաց,
միզանցքի ծայրին չնչին քանակութեամբ մա-
ծուցիկ հիւթ, որը և ընդունում են որպէս սերմ։
Սակայն դա սերմ չէ, այլ մի ֆիզիոգիական
երևոյթ է և կայանում է հետեւալում։ Միզանց-
քի պատերը քնքոյշ և թաց մնալու համար միշտ
արտադրվում է մի տեսակ թանձրոտ հիւթ։ Մէկ
կազմուածքում դա շատ է արտադրւում, միւ-
սի մէջ՝ քիշ։ Գիշերը, քնած միջոցին ամբողջ
արտադրված այդ ճարպային հիւթը հաւաքվում
է միզանցքում և առաւտեան միզելիս միան-
գամից դուրս գալիս տեսանելի կերպով։ Այս
հեղուկը առատօրէն արտադրվում է նաև ցե-
րեկը, երբ առաջանում է գրգիռ և էրէկցիա։
Բացի այս՝ փորկապութեան ժամանակ շագանա-
կամէ գեղձը ճնշվելով անցնող կոշտ մասերից թող-
նում է իր հեղուկը, որը նոյնպէս նման է սեր-
մի և յաճախ շփոթվում է սերմի հետ։ Ուրեմն
վերոյիշեալ գէպքերը սպէրմատօրրէա չեն և ան-
վնաս են օրգանիզմի համար, ուստի և չը պէտք
է վախենալ։ Որպէսզի կասկածը փարատվի և
մարդ անհանգիստ չը լինի, կարծելով սեռական

գործարանները թուլացել են, լաւ կը լինի իս-
կոյն այդ հեղուկը ընսել տայ մասնագէտի մօտ,
որը կը պարզէ ամեն ինչ։ Իսկ երբ կը յայտնա-
նագործվի իսկական սպէրմատօրրէա, այն ժա-
մանակ անմիջապէս պէտք է դիմել մասնագէտ
հմուտ բժշկի և ժամ առաջ ամրացնել սեռական
գործարանները։ Ինչ վերաբերվում է բժշկու-
թեանը, սա միենոյն է երազախաբի և սպէր-
մատօրէայի համար։ Դեղերից առաջ կարեոր է
հիւանդի կողմից համբերութիւն և որոշ կենցա-
ղավարութիւն ըստ բժշկի ցուցմունքի։ Մենք
այստեղ ուրիշ բժշկաբանների նման չենք տալ
դեղատումսերի ցուցակներ, քանի որ դա ան-
նպատակայարմար է և անմատչելի իւրաքան-
չիւր պատահական ընթերցողի համար։ Ենթա-
դրենք այս գրքում շարել ենք հարիւր բէցէպտ.
հիւանդը առանց բժշկական կրթութեան չի կա-
րող աչքը փակել և մատը դրած բէցէպտը ընտ-
րել։ Բացի այդ կան այնպիսի դեղեր, որոնք
դեղատներից չեն տրվում առանց բժշկի ստո-
րագրութեան։ Ուրեմն շահագիտական նպատա-
կով և կամ գրքիս ծաւալը մեծացնելու հայեցա-
կէտով չենք դեկավարվիլ և անհասկանալի բէ-
ցէպտներ չենք մատուցանիլ ընթերցողին։ այլ
դրա փոխարէն խորհուրդ կը տանք նախ հեռու
մնալ գայթակղեցուցիչ պայմաններից և չափա-
ւորել ամեն մի բնական պահանջ, երկրորդ՝ ա-

ուանց յետաձգելու դիմել բժշկի, որը կը նշանակէ համապատասխան դեղեր ըստ հիւանդութեան էութեան և աստիճանի: Մենք կը տանք խորհուրդներ և մի քանի բէցէպտներ այնպիսի մարդկանց համար, որոնք սաստիկ ամաչելուց գերազասում են հիւանդ մնալ, հիւծվել, քան թէ իրանց դաղտնի ցաւը յայտնելում և իցէ՛ Մեր բէցէպտները պիտանի կը լինեն նաև այն գաւառացիների համար, որոնք հեռու լինելով բժշկական պունկտերից, անկարող են մեծ ծախսեր անել, գործը թողնել և գնալ քաղաք բժշկվելու. այդպիսիները կարող են բէցէպտը ուղարկելով քաղաք որևէ ծանօթի, պոստով ստանալ գեղը, Ներքոյգրեալ ընտրեալ բէցէպտները վերցրել ենք հոչակաւոր բժշկների գրուածքներից, և նրանք անվտաս են նոյնիսկ այն դէպքում, երբ սխալ ընտրութեամբ գործադրվեն:

Երազախարով և սպէրմատօրբէայով տառապող նիհար, քայքայված մարդիկ նախ պէտք է կազդուրեն իրանց թոյլ մարմինները սննդարար և դիւրամարս կերակրով. պէտք է խմեն ընտիր դինի քիչ քանակութեամբ, լինեն մաքուր օդի մէջ, կատարեն չափաւոր մարմնամարզութիւն: Ուտելիքներից մեծ մասը պէտք է կազմեն—մըսաջուր (բուլիօն), խորոված միս, կաթ, քաղցր մածուն, թերիսաշ ձու, վայրի թոչուն, լաւ պանիր, կարագ, վէտչինա և այլն: Անհրաժեշտ է,

որ նըանք միառժամանակ թողնեն սեռական վայելքները, խուսափեն գրգոիչ տեսարաններից, հարբեցողութիւնից, ծխելուց. մտաւոր և Փիզիքական յոդնեցուցիչ աշխատանքներից պէտք է հեռու լինեն: Սերմնահոսութեան ժամանակ մեծ օգուտ է տալիս սառն ջուրը, որը գործադրվում է հետեւեալ ձեռքով. սառն կիսավաննաներ (полуванны), սստավաննաներ (сидячія ванни), սեռական գործարանների լուացումներ սառն ջրով, սառնաղի շփումներ առաւօտները, գետում և ծովում լողացումներ: Այս բոլորը պէտք է ի կատար ածել մինչև ճաշ, երեկոյեան քնելուց առաջ ջրի գանազան մանիպուլիացիաները ոչ միայն օգտակար չեն, այլ ընդհակառակն, կարող են երազախար պատճառել: Երազախար է պատահում, երբ քնելուց անմիջապէս առաջ ընթրում են և ստամոքսը կերակրով լցնում:

Պէտք է խուսափել տաք ու փափուկ անկողնից, որի ջերմութիւնը տաքացնելով ողնուցեղի սեռական կենարոնը, ենթարկում է երազների և սերմնահոսութեան: Դեղերից ամենաէականը և զօրաւորը երկաթն է և իր տարբեր ձեւափոխութիւնները: Բայց քանի որ երկաթը ունի մի վատ յատկութիւն, այն է պատճառում է փորկապութիւն և փչացնում է՝ ատամները, անպայման պէտք է լաւ ընտրութիւն անել երկա-

թի դեղերի մէջ, համակերպվելով ստամոքսի և
ատամների գրութեանը: Երկաթաղեղերից առա-
ջին տեղը բանում է phosphorus ferri cum am-
monio citrico, որը ընդունվում է սիրոպի ձեռվ,
այսինքն sirupus phosphor. ferri cum ammoni
citrico, 2—3 անգամ թէյի գդալով, կամ թէ
Rp. phosphor. ferri cum ammon. 0,15

Aq. destillat. 180, 0

MDS. 3-4 անգամ օրէնը հացի գդալով: Եւ
կամ փոշու ձեռվ—^{1/2} զրան վերոյիշեալ դեղից
6 զրան շաքարի հետ: Երկաթի միւս արտադ-
րութիւններից ընտիրներն են.—ferratin, օրա-
կան 3 անգամ 5 զրան փոշի. ferrum hydroge-
nio reductum—նոյն չափով. liq. ferri peptonati
Pizzol, օրը 3 անգամ ուտելուց յետոյ մի թէյի
գդալ ընդունել կէս բաժակ կաթով. Բլոդ.ի պի-
լիւները. օրը 2—3 անգամ 3—4 հապ միանգա-
մից. ferrum lacticum—2 զրան 2—3 անգամ
և այլն: Օգտակար և կազդուրիչ ազդեցութիւն
ունի նաև խինան, փոշու և հեղուկի ձեռվով.—
chininum muriaticum—5 զրան, օրէնը 3 անգամ
կամ tinctura chinæ composit.—20 կաթիլ խմել
ջրի մէջ օրէնը 3 անգամ: Զղերը հանգստացնող
ներդործութիւն է անում բրօմը և իր աղերը.
օրինակ՝

Rp. Kali bromati 6,0

Aq. destillat. 180,0

Mucil. salep. 15,0

MDS. օրական 3 անգամ հացի գդալով:
կամ թէ Rp. Natri bromasi 10,0

Aq. destillat. 200,0

MDS. 3 անգամ հացի գդալով:

Բացի վերոյիշեալներից մենք կը տանք նա-
և միքանի ազդեցիկ բէցէպտներ, միժամանակ
խորհուրդ տալով—առանց բժշկական անձի ցուց-
մունքի, ինքնուրոյն շաբլօն ընտրութեամբ չօգ-
տվել: Աւելորդ չէ յիշել այն վատ սովորութիւ-
նը, որ երբ մէկը բժշկվում է որևէ դեղով, իր
ընկերներին կամ բարեկամներին լաւութիւն
անելու նպատակով այդ բէցէպտն է առաջար-
կում առանց բժշկի: Սակայն պէտք է զիտենալ,
որ եթէ մի որոշ դեղ օգնեց որևէ մարդու,
նոյն դեղը անպայման չի կարող բուժել և ու-
րիշ անձի միենոյն հիւանդութիւնները, որովհե-
տեւ կազմուածքները տարբեր են լինում և միե-
նոյն դեղը ազդելով մէկի վրայ, չի ազդում միւ-
սի վրայ:

Հնացած երազախարի և սպէրմատօրէայի
գէմ լաւ են ազդում հետեւալ դեղերը:

Яр. Kali bromati 10,0

Lupulini

Camphor. ras. aä 0,5

Mfp. div. in part. aeq. № 10,

DS. Երեկոները ընդունել երկու պարագօկ,
մէկը միւսից մի ժամ յետոյ:

Rp. Glandul. Lupulin.

Sacchar albi aä 0,5

Mf p. d. t. d. № 4.

DS. Երեկոյեան ընդունել մէկ պարագօկ:

Rp. Decoct. lich. islandic. 4,0—180,0

Elex. acidi Nalleri 2,0

Sir. simpl. 15,0

MDS. 2 ժամը մի անգամ հացի դղալով:

Ծանր դէպքերում մեծ օգուտ է բերում է-
լքարականութիւնը, որ անպայման պէտք է
գործադրէ բժիշկը կամ բանիմաց փորձված ֆէլդ-
էլքը:



Ց Ա Ն Կ

Ցառաջաբան


հրես

- | | |
|------------------------------------|--------|
| 1. Սեռական կեանք | 4—8. |
| 2. Տղամարդի սեռական գործարանները . | 9—12. |
| 3. Տղամարդի սերմը | 13—17. |
| 4. Սեռական յարաբերութիւն | 18—38. |
| ա. կանոնաւոր մերձաւորութիւն 27—28. | |
| բ. Հասունութիւն | 28—30. |
| գ. Մերձաւորութեան չափը | 30—31. |
| դ. Սեռ. յարաբ. արգելումն. | 31—32. |
| ե. Սեռ. յարաբ. ձեր | 32—34. |
| զ. Մերձաւ. կանոններ | 34—35. |
| է. Նախազգուշ. կանոններ | 35—38. |
| 5. Ժուժկալութիւն. | 39—50. |
| 6. Սատիրիազ և պրիապիզմ | 51—53. |
| 7. Օնանականութիւն | 54—77. |
| 8. Երազախաբ | 78—82. |
| 9. Սպէրմատօրբէտ | 83—88. |
| 10. Բժշկութիւնը | 88—92. |

3 A 8

Geographie

1. 1-10. 1. 1-10. 1. 1-10.
11-20. 1. 11-20. 1. 11-20.
21-30. 1. 21-30. 1. 21-30.
31-40. 1. 31-40. 1. 31-40.
41-50. 1. 41-50. 1. 41-50.
51-60. 1. 51-60. 1. 51-60.
61-70. 1. 61-70. 1. 61-70.
71-80. 1. 71-80. 1. 71-80.
81-90. 1. 81-90. 1. 81-90.
91-100. 1. 91-100. 1. 91-100.



10124

БИБЛИОТЕКА
ИСТОРИЧЕСКОГО
ИНСТИТУТА
Академии Наук
СССР

673-88

6-88

6001

Նոյն հեղինակի լոյս տեսած աշխատասիրութիւնները՝

Արդյունքներ

1.	Խորտակուած սէր (վէպիկ) գինը	30 կ.
2.	Գրբացի ստրուկներ (պատկեր) գ.	5 կ.
3.	Կեանքի բօմանից (վէպիկ) գ.	25 »
4.	Էմիլ Զօլա (փոքրիկ տեսութիւն) գ.	5 »
5.	Լումանի հէքիմը (պատկեր) գ.	8 »
6.	Բաֆֆի (համառոտ տեսութիւն) գ.	10 »
7.	Կեանքի խորշերից (պատկերներ) գ.	20 »
8.	Առաջին մուրացկանութիւնը (պատ.) գ.	8 »
9.	Արբեցողի զատիկը (պատկեր) գ.	3 »
10.	Թշուառներ (պատկեր) գ.	8 »
11.	Միկոյն դագաղում բ. տպ. (պատկերա- զարդ) հայ-թրք. կոիւ	7 »
12.	Սիրոյ յարութիւնը (պատկեր) գ.	10 »
13.	Հայ կտրիճները (պատկեր հայ-թրք. կոիւ)	7 »
14.	Տղամարդի սեռական կեանքը (բժշկական) գ. 25 »	

Թարգմանութիւններ

1.	Անիւսա (Զեխովից) գինը	3 կ.
2.	Դիմակ (Զեխովից) գ.	5 »
3.	Եինիի համար գ.	3 »
4.	Ճապոնիա գ.	25 »
5.	Արբեցողութեան դէմ գ.	15 »
6.	Կինը և նրա տնտեսական դրութիւնը (Կլար Ցետկինի) գ.	15 »
7.	Մշտական զօրք և միլիցիա.	12 »

Դիմել Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրավաճառա-
նոցը կամ Թիֆլիս, Городская Управа, контролеру
водопровода А. Есаянцу.

Գումարով գնողներին մեծ զեղչ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0267168

2898